ISSN 1829-2216

գրեթեթթ

¶ð ºÂ ºðÂ-ÒØºè

¸»Ï ï»Ùµ»ñ 9, 2010

N 4(18)
Գինը 100 դր

Â º ð Â À î ä ² ¶ ð ì à ô Ø ¾ ä º î ² Î ² Ü ² æ ² Î ò à ô Â Ú ² Ø ´

¶ð²Î²Ü ºðÆî²ê²ð¸²Î²Ü ÂºðÂ - ¶ð²Î²Ü ºðÆî²ê²ð¸²Î²Ü ÂºðÂ - ¶ð²Î²Ü ºðÆî²ê²ð¸²Î²Ü ÂºðÂ



ԱՐԱՄ ՊԱՉՅԱՆ

öñÏãÇ ³ñÙáõÝÁ, ¨ Ýñ³ »ñ³½³ÝùÇ ËÇ½³-ËáõÃÙáõÝÁ: ºñ»ëáõÝ»ñ»ù³ÙÙ³ ÐÇëáõëÁ ÷áñÓáõÙ ¿ ÷ñÏ»É Ù³ñ¹Ï³ÙÇÝ Ñá·ÇÝ, ¨ ³Ù¹ ÷áñÓÁ ßñçáõÙ ¿ å³ïÙáõÃÙ³Ý áÕç ÁÝÃ³ó-ùÁ: öáñÓÁ ·Çï³Ïóí³Í ¿ñ Ç ÍÝ» áñå»ë ÙÇïù, µ³Ùó ÇÝãù³Ý ÑáõÙ½ áõ ËÇÕ× Ï³ ³Ù-÷á÷í³Í ³Ù¹ ÙïùÇ Ù»ç, ÇÝãù³Ý Ï³Ùù áõ ÙÕáõÙ, áñ å³ÙÃáõÙ¿Ñ³ÝáõÝ ÏÙ³ÝùÇß³ñáõ-Ý³ÏáõÃÙ³Ý: ºë Ùï³ÍáõÙ »Ù Ýñ³ »ñÇï³-ë³ñ¹³Ï³Ý á·áõ Ù³ëÇÝ ¨ á·¨áñíáõÙ ³Ù¹ å³ñïáõÃÙ³Ùµ:

Ø»Ýù »Ï»É »Ýù, ¨ ë³ ×ßÙ³ñïáõÃÙáõÝ ¿. áõ½áõÙ »Ýù ÷áË»É ³Ý÷á÷áË ³ßË³ñÑÁ, ã¿, ³í»ÉÇ ×Çßï, öàðÒàõØ »Ýù ÷áË»É. Ù»Ýù ÷áñÓáõÙ »Ýù å³ñïí»É ¨ å³ñïíáõÙ »Ýù, áã Ã» Ñ³ÕÃ³Ý³ÏÇÝ, ïÇ»½»ñùÇÝ Ï³Ù á·áõÝ, ³ÙÉ å³ñïíáõÙ »Ýù ÇÝùÝ»ñë Ù»½ ¨ å³ï³ëË³Ý³ïáõ »Ýù ÙÇÙÇ³ÙÝ Ù»ñ öàðÒÆ ³éç¨, áõëïÇ ·ñ³Ï³ÝáõÃÙáõÝÁ ÁÝïñ»É »Ýù áñå»ë ÷áñÓÇ ×³Ý³å³ñÑ` ÁÝ¹áõÝ»Éáí Ýñ³ ³ÝÇÙ³ëï ÇÙ³ëïÝáõÃÙáõÝÁ: ¶ñ³Ï³-ÝáõÃÙáõÝÁ Ù»½ Ñ³Ù³ñ ï³·Ý³å ¿ ¨ ³É»Ï-ëÇ³**: ¶»Õ»óÏáõÃÙ³ÝÁ Ñåí»Éáõ ï»Ýã³ÝùÁ Ïáõñ³óÝáõÙ ¿ ÉáõÙëÁ. ·ñáõÙ »Ýù ï³Õ³Ý¹³-íáñ ¨ ³ÝßÝáñÑù, ë»ÝïÇÙ»Ýï³É ¨ å³Ã»-ïÇÏ, áÕµ»ñ·³Ï³Ý ¨ ÏÍáõ Ñ»·Ý³Ýùáí, ¨ áã áù áãÇÝã ãÇ Ï³ñáÕ ÷áË»É, ãÇ Ï³ñáÕ ÁÝ¹-¹ÇÙ³Ý³É, Ï³Ý·Ý»óÝ»É Ù»ñ ÁÝÃ³óùÁ: ²Ù-·áõÙ ³×áÕ Ýáñ³ïáõÝÏ Í³éÁ ³ÝÇÍí»Éáõó ãÇ ãáñ³ÝáõÙ, ³ñ¨Ç ßáÕ»ñÁ ã»Ý ·áÉáñßÇ³ó-ÝáõÙ ÍáíÁ. åÇïÇ Ïïñ»É Í³éÁ, ó³Ù³ù»óÝ»É ÍáíÁ ÉóíáÕ µáÉáñ ·»ï»ñÁ: ÆëÏ Ýñ³Ýù, áíù»ñ çñáõÙ »Ý »ñÇï³ë³ñ¹áõÃÙ³Ý Í³éÁ, ÃáÕ ãëå³ë»Ý »ñ³ËïÇùÇ. ßÝáñÑ³Ï³É ÉÇÝ»Éáõ Å³Ù³Ý³Ï ãáõÝ»Ýù. Ù»Ýù ï³ñí³Í »Ýù ÷³éùÇ ÷ÇÉÇëá÷³ÙáõÃÙ³Ùµ áõ Ù³Ñí³Ý .³ÙÃ³ÏÕáõÃÙ³Ùµ: Ø³ÑÁ Ù»ñ Ñ³í³ï³ñÇÙ ÁÝÏ»ñÝ ¿, ¨ ó³ÝÏ³ó³Í å³ÑÇ ïÙ³ÝùÝ ÁÝ¹Ñ³ï»Éáõ Ù»ñ ·ÉËë³íáñ Ë³Õ³ÃáõÕÃÁ: î³ñÇÝ»ñÇ ÁÝÃ³óùáõÙ Ù³ñ¹Á ÏáñóÝáõÙ ¿ Ù³ÑÁ ½·³Éáõ Ï³ñáÕáõÃÙáõÝÁ, Ù³Ñí³Ý Ñ»ï »ñÏËáë»Éáõ µ³ó³éÇÏ áõÝ³ÏáõÃÙáõÝÁ, ¨ ÏÙ³ÝùÁ ·Ý³Éáí ·»ñ³Ï³ÙáõÙ¿Ù³Ñí³ÝÁ. »ñÇï³ë³ñ¹áõÃÙáõÝÁ ÙÇ³ÏÝ¿, áí Ë³ÕáõÙ ¿ Ýñ³ Ñ»ï. Ïïñáõ Ù¿»ñ³ÏÝ»ñÁ, ëñï³å Ý¹-íáõÙ ¿` Ï³Ëí»Éáõ Ñ³Ù³ñ, ûñ»ñáí ëáí³-Ñ³ñ ¿ ÉÇÝáõÙ, Ë»Õ¹áõÙ ¿ ·Çï³ÏóáõÃÙáõÝÁ ÃÙñ³¹»Õ»ñÇ Ù»ç, Å³Ù»ñáí Ýëïáõ Ù ¿ µ³ó å³ïáõÑ³ÝÇ ·á·ÇÝ, ÍËáõÙ ¿ Ý å³Ñ³Ýç, ËÙáõÙ ¿, áñ ËÙÇ. Ù³ÑÁ ëå³ëáõÙ ¿` ï³ñí³Í ³ÙëÙ³ÝÏ³Ï³Ý Ë³Õáí: Ø³ÑÁÙ³-ÝáõÏ ¿:

²ñÃÙáõñ è»ÙµáÙÇÝ ï³ÝáõÙ »Ý ÌÇÏïáñ ÐÙáõ·áÙÇ Ùáï. Ñ³Ý×³ñÁ Ï³Ý·Ý³Í ¿ ï³-Õ³Ý¹Ç ¹ÇÙ³ó. ¹Åí³ñ ¿ å³ïÏ»ñ³óÝ»É ½·³óáÕáõÃÙáõÝÝ»ñÁ, áñáÝù ³å ñ»É »Ý ³Ù¹ å³ÑÇÝ ·ñáÕÝ»ñÁ: Æñ³Ï³ÝáõÙ` ÐÙáõ·áÙÇ Ñ³Ù³ñ Ñ»ñÃ³Ï³Ý Ñ³Ý¹ÇåáõÙ, ÇëÏ è»Ù-µáÝ, è»ÙµáÙÇ Ñ³Ù³ñ ¨ë` Ñ»ñÃ³Ï³Ý Ñ³Ý-¹ÇåáõÙ:

ºñÇï³ë³ñ¹áõÃÙ³ÝÁ ã»Ý ëå³ëáõÙ. ó³-íáù, »ñÇï³ë³ñ¹áõÃÙáõÝÇó »Ý ÙÇßï ëå³-ëáõÙ` ÙÇ ÷áùñ í³Ëáí, Ï³ëÏ³Í³Ýùáí, µ»-ñ³ÝÝ»ñÁ ³ñÑ³Ù³ñÑ³Ýùáí ÍéÙé»Éáí, ëå³ëáõÙ »Ý Ýáñ ËáëùÇ, ³é³Ýó Ñ³ëÏ³-Ý³Éáõ, áñ »ñÇï³ë³ñ¹áõÃÙáõÝÁ ÇÝùÝÇÝ Ëáëù ¿: êÏ½µáõÙ ëå³ëáõÙ »Ý ÉéáõÃÙ³Ùµ (÷á-ÃáñÇÏÇó ³é³ç ÙÇßï ¿É ÉéáõÃÙáõÝ ¿), Ñ»ïá, »ñµ ÷áÃáñÇÏÁ ßñç³ÝóáõÙ ¿ ï»Õ³ÝùÁ, Ñ³Õ-Ã³Ý³ÏÝ Çñ ÑÇßáÕáõÃÙ³Ý Ù»ç ëÕ³ ·ñáõÙ ¿ ¨ë Ù»Ï å³ïÙ³Ï³Ý å³ñ-ïáõÃÙáõÝ: Üñ³Ýù, áíù»ñ

»»» էջ 2

“Actus Tragicus”*

ºñÇï³ë³ñ¹áõÃÙ³Ý ÙÇ³Ï å³ïñ³ÝùÁ ³ÝÙ³ÑáõÃÙáõÝÝ ¿, áñÝ ³í³ñïíáõÙ ¿ å³ñ-ïáõÃÙ³Ùµ ¨ áõñ»ÙÝ` å³ñïáõÃÙáõÝÁ ³ÝÙ³-ÑáõÃÙ³Ý ëÏÇ½µÝ ¿: ä³ñïáõÃÙáõÝÁ ãáõÝÇ µ³ñáÙ³Ï³ÝáõÃÙáõÝ ¨ ãáõÝÇ Ñ³Ùñ»ÝÇù, ÇÝãå»ë` ù³áëÁ Ñ³Ù³Ï³ñ·. ³ÙÝ ÁÝ¹áõÝáõÙ ¿ »ñÇï³ë³ñ¹áõÃÙ³ÝÁ ·ñÏ³µ³ó` ÷³Ã³Ã»-Éáí Ýñ³Ý Ù»Ý³ÏáõÃÙ³Ý ë³éÁ ë³í³Ýáí: Ø»Ýù ãáõÝ»Ýù Ùïù»ñ, ³ÙÉ ëáëÏ ½·³óÙáõÝù-Ý»ñÇ ³éÏ³ÙÍáõÙÝ»ñ, áñáÝù ï»ë³Ý»ÉÇ »Ý ÙÇ³ÙÝ Ë³í³ñÇÝ: Ø»Ýù ã»Ýù ·³ÉÇë ³í³Ý-¹áõÙÃÝ»ñÇó áõ ã»Ýù ·ÝáõÙ ¹»åÇ ³í³Ý-¹áõÙÃÝ»ñÁ. µÝáõÃÙáõÝÁ ãÇ Ï³ñáÕ ³í³Ý-¹áõÙÃ áõÝ»Ý³É, ÇÝãå»ë` ²ëï³Í ãÇ Ï³ñáÕ Ñ³Ùñ áõÝ»Ý³É: ä³ñïáõÃÙáõÝÁ ³ÝÙÇï ¿, µ³Ùó áã ³Ý½·³. ³í»ÉÇ É³í ¿ »ñÇï³ë³ñ¹ ÉÇÝ»É, ù³Ý Ù³ñ¹ ¨ ³í»ÉÇ µ³ñáÙ³Ï³Ý ¿ å³ñïí»É, ù³Ý Ñ³ÕÃ»É ³Ùë ÏÙ³ÝùáõÙ, »Ã» ³ÙÝ ÏÙ³ÝùÁ Ï³ ³éÑ³ë³ñ³Ï: ÆëÏ Ç:Ýã ¿ ½·³óÙáõÝùÇó ½áõñÏ ÙÇïùÁ, áÕáñÙ»ÉÇ ÙÇ ÏÙ³Ëù, áñÑ³í»ï å³ñïíáõÙ ¿ù³ÙáõÝ: Ð³-ëáõÝ áõ ÑÕÏí³Í ÙÇïù` Ï»Ýë³÷áñÓáí É»-óáõÝ, Ï»ÝïñáÝ ¨ »ñÏÑ³Ù³óù` áõÕÕí³Í ³ÝóÙ³ÉÇÝ áõ ³å³·³ÙÇÝ. ³Ñ³ë³ ¿Ñ³Õ-Ã³Ý³ÏÇ Í»Íí³Í ÃÇñ³ËÁ. å»ïù¿Ù»Ï ³Ý-·³Ù ¹ÇåáõÏ³Ñ³ñ»É ÃÇñ³ËÁ, ³ÙÉ áã áÕç ÏÙ³ÝùÇ ÁÝÃ³óùáõÙ É³ÙÝ³óÝ»É ÝáõÙÝ ³Ýóù` ÏáñóÝ»Éáí Ë³Ý¹³í³éáõÃÙáõÝÁ: ÆëÏ Ý»ñÏ³±Ý. ³ñ¹Ùáù Ý»ñÏ³Ý ãÇ Ó¨³íáñáõÙ ·»Õ»óÏáõÃÙáõÝÁ, ¨ ³ÏÝÃ³ñÃÁ ãÇ ÝáõÙÝ³-ÝáõÙ Ñ³í»ñÅáõÃÙ³ÝÁ: ²Ýóù³ÉÝ áõ ³å³-·³Ý ëáëÏ Ý»ñÏ³ÙÇ Ã³÷áÝÝ»ñÝ »Ý, áõñ»ÙÝ Ï»Ýë³÷áñÓáí µÃ³ó³Í ÏÙ³ÝùÁ Ë³µíáõÙ ¿ Å³Ù³Ý³ÏÇ ëÉ³óùÇÝ, ÇëÏ Å³Ù³Ý³ÏÁ »ñµù ãÇ ÇÙ³ëïÝ³óÝáõÙ Ù³ñ¹áõÝ, ÁÝ¹Ñ³-Ï³é³ÏÁ` ï³ñÇÝ»ñÇ ÁÝÃ³óùáõÙ ù³ÙáõÙ ¿ Ýñ³ áÕç ÇÙ³ëïÝáõÃÙáõÝÁ: ºñÇï³ë³ñ¹áõÃ-ÙáõÝÁ Ý»ñÏ³Ý ¿. Ù»ñ »ñ³ÏÝ»ñáí Ñáëáõù ¿

ԱՐՔՄԵՆԻԿ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ԹԻԿՈՒՆՔԻՑ ՓՉՈՂ ՍԱՌՆՈՒԹՅՈՒՆ

Եվ հիմա նույնիսկ թերթ կարդալիս ես ապահով եմ՝ ոչ ոք չի խոցի ինձ թիկունքից…
Հովհ. Գրիգորյան

Արածիդ անհեթեթության նողկալի զգացողությունը, համակարգչի կամ սպիտակ թղթի առջև նստել չկարողանալու լացացնող անզորությունը, գործադրած ջանքերիդ անիմաստության խեղդող տրտմությունը եղել են, եղել են, եղել են, բայց չեն սպանել, տղե՛րք, որովհետև այդպիսի պահերին թիկունքներիդ փչող սառնությունը ուրիշ տեղերից է փչել, որովհետև դրան զուգահեռ տաք շնչի ներկայությունն եք զգացել, որից գուցե չեք տաքացել, բայց վերջնականապես չեք էլ սառել, տղե՛րք:

Մեր դարձդարձիկ ժամանակների՝ ձեզնով չմեռնող այս հույսը, մեր դժվար ջանքերի՝ ձեզնով խիզախումի վերածվող այս «Գրեթերթը», մեր լույսի ու լավի համար մաքառումների այս դուք՝ տղերք, որ ջահել եք, տաղանդով ու ավյունով լեցուն, որ եթե նույնիսկ կողք-կողքի էլ չեք քայլում, ապա գոնե իրար հետևից գնում եք և իրարից առաջ անցնելու գեղեցիկ ու ուրախացնող ձգտումն ունեք, թիկունքից փչող սառնության վտանգն ունեն: Մի՛ թուլացեք, տղե՛րք: Հղփացած վերևների անտարբերությունը չի սա, իրենց մտավոր խեղճությունը արհամարհանք դարձրած ընթերցողների՝ գրականությունից երես թեքելը չի սա, ձեր մեջ, ձեր կողքին, ձեզնից մեկ քայլ հետ, կամ մեկ քայլ առաջ մեռյալներ կան, իսկ սառը շունչն ավելի սպանիչ է, երբ մեռյալներից է փչում: Ազատվե՛ք մեռյալներից, տղե՛րք, նույնիսկ եթե նրանք թանկ են ձեզ համար: Ու ձեզ ապահով մի զգացեք, երբ ձեր կողքինի կամ հետևինի թիկունքն ավելի մերձ է մեռյալին, նրա ընկնելով՝ ձեր հերթն է գալու, տա՛ք շնչեք, տղե՛րք:

Եկել ենք, պինդ ենք եկել, բայց ի՞նչ ենք ուզում, տղե՛րք: Ուզելու մեր իրավունքը կարծես ապահովել, հաճախ նաև՝ պարտադրել ենք, ու եկեք երբեք չմտածենք, որ մեր ուզելը հենց այդ ուզելու իրավունքը նվաճելն էր, ու հանկարծ մտքներովս չանցնի, թե հաջորդ քայլն անպայման հաջորդներին պետք է թողնել: Չէ՞ որ հատկապես գրականության մեջ մեռյալները երբեմն հարություն առնելու սովորություն ունեն, կամ եթե նույնիսկ չունեն, նրանց զոռով հարություն տվողներ կան՝ ինքնասիրահարվածի իրենց կրքերին ի հագուրդ: Այդ սուտ քրիստոսներին սեփական աչքերով էլ տեսնեք՝ չհավատաք նրանց հարությանը, տղե՛րք:

Ու այդ ինքնասիրահարվածների՝ այլևս չգրողին կրկին գրող հռչակելով իրենց Աստված զգալու այդ խեղճ ջանքը, այդ մրցանակաբաշխություն կոչվածը, որ իրենց ուղղված աղոթք փախցնելու թաքուն փափագն ունի, կամ արդեն աղոթածներին վերևներից «շնորհակալություն» նետելու բացահայտ անպատկառությունը, այնքան բացահայտ, որ մեկ-մեկ զարմանում ես «աղանդավորների» ներկայությունից: Ու մանավանդ՝ այդ իբր անտեսումն ու արհամարհումը նրանց, ում աղոթքի չէ, կեսբերան նետված գովասանքի համար իրենք են պատրաստ աղոթել ու ավելի մոլեռանդ:

Մրցանակները չէ, որ արժևորում են գրողին, գրողն է, որ արժևորում է մրցանակները: Մի Արամ Պաչյան, մի Հրաչյա Սարիբեկյան շատ ավելին են արել հենց այդ մրցանակաբաշխության համար, քան մրցանակաբաշխությունը նրանց, քանզի, վստահ եղեք, երիտասարդ գրողի պինդ գիր ու ապագայի լուսավոր հեռանկար պարագրկող մի պատմվածքն ավելին արժե, քան նույնիսկ ուզածդ դասականի հանկարծ հայտնաբերված միջին մակարդակի անտիպների մի հատորը: Ու մի Հրաչյա Սարիբեկյան ավելին արեց նույն մրցանակաբաշխության արժևորման համար, քան իր գրող լինելն հիշած մի գրող, որին շողոքորքաբար խնկարկելով մի կիսատ-պռատ ռեպորտաժ պոկեցին «Հայլուրում»՝ իբրև գովազդ: Այսօր ոչ ոք չի հիշում, ասենք, տասը տարի առաջ որ հերթականին խնկարկելու արդյունքում ինչ էր գովազդվում, բայց բոլորը գիտեն, որ մեծն Հրանտը կոնյակ էր խմում ու սիրում էր հոլանդական բարակ սիգար:

Սառը շունչն ավելի սպանիչ է, երբ կենդանի մեռյալներից է փչում, տղե՛րք:

Ու ի՛մ արածի անհեթեթության նողկալի զգացողությունը, համակարգչի կամ սպիտակ թղթի առջև նստել չկարողանալու ի՛մ լացացնող անզորությունը, ի՛մ գործադրած ջանքերի անիմաստության խեղդող տրտմությունը կենդանի մեռյալներին ես երբեք չեմ ներելու, իմ թիկունքին փչող այս սառնությունը ես երբեք չեմ ներելու կենդանի մեռյալներին, թեպետ վստահ եմ, որ այդ ամենը ժամանակավոր է, քանզի վստահ եմ, որ ազատվելու ենք մեռյալներից, ու վստահ եմ, որ ձեր տաք շունչն է լինելու իմ թիկունքին, ու բոլորիս տաք շունչն է լինելու բոլորիս թիկունքին, տղե՛՞րք:

ԱՇՆԱՆԱՅԻՆ ԷՏՅՈՒԴՆԵՐ

ԿԱՐԵՆ ԱՆՏԱՇՅԱՆ

(Իմ մաեստրո պապիկին՝ Տ.Մ.)

***
Որսը և որսորդը շտապում են՝
իրարանցելով աշունը:

Երկար ճամփորդության համար
անհրաժեշտ ամեն ինչ ամբարած
հյութեղ մեղրատանձն իր ծառին
վայելում է արևը աշնանային առավոտվա:

Վերջն այնքան անսպասելի է գալիս,
որ որսն ու որսորդը չեն հասցնում բաժանվել:

***
Կուշտ սարդն անձրևից կաթ է որսում -
զվարճանում է:

Սարդն իր վերջին սարդոստայնին
ողջ Աստի աստղածորն է շարահյուսել:

Այլևս չսովելու հեռանկարը
այնկողմնային կապույտն է մշուշի:

***
Հնարավոր չէ սիրել առանց ունենալու ցանկության
և... հնարավոր չէ ունենալ:

Հնարավոր է միայն երազել
վերածվելու ուղղությունը:

***
Ջուրը հասնում է ջրին -
պղտորվում է... ծովի կանխազգումից:

***
Աշնան ամպ ու զամպին կորցրածս ճանապարհը
երևակայում եմ... շոշափելով
հրեշտակի պորտից երեք մատ ներքև
Ջրհոսի համաստեղության նշանակը...

Տեղորոշումն անհնար է առանց երկինքը կարդալու:

***
Ցուրտ համակարգում
բոլոր տաք բաները փնտրում են իրար...

Տաքանալն ու տաքացնելը
նույն բնությունն ունեն:

***
Աշունն անցնում է լալահառաչ թափորով՝
քթի տակ շվշվացնելով տխուր ձայնանիշեր
անվերադարձ բաների մասին:

Ես էլ եմ տխրում արդեն սովոր ձևով
ու պատրաստվում հրաժեշտի:

Մի քիչ մեռնելը միշտ լավ է առողջության համար:

***
Այն ամենն ինչ խանգարում էր ինձ ապրել՝
ինձ սովորեցրել էին:

Հիմա գրեթե լսում եմ լռությունը:

ՉԱՐ ՀԵՔԻԱԹ

Դու կեղտի կտոր ես, պապ: Որոշում եմ՝ պապիս ծեծելու եմ, վառարանի երկաթե խառնիչով նրա ոտքերը ջարդելու եմ, ցավացնելու եմ: Նա մամայիս ու քեռիներիս ողնաշարերը ջարդեց ու իր որջից կյանք ուղարկեց: Նրա տանն ավարտվում է մարդասիրությունս: Միակ դեպքն է, որ ուզում եմ մարդ սպանել: Ուզում եմ տեսնել նրան թփրտալիս:

Տատս աչքերը գետնին մոտ էր քայլում: Պապս իր յոթանասունչորսերորդ տարում էլ կարողացել էր տատիս մեջքին փայտով խփել:

Փայտով խփում, հո չեմ խփում պապիս ոտքերին: Շալվարը լրիվ արյուն է: Ինձ անիծում է՝ հիվանդություն ընկնես, մեռնես: Հիվանդություն ընկել եմ, բայց ինքն է մեռնում: Լաց է լինում, հո չի լացում:

Տատս իրենց հողամասում վարունգներն է ջրում: Ընտրում եմ ամենափոքր, փշոտ վարունգը, պոկում: Տատուս աչքերը խոնավանում են: Չգիտեմ՝ իր խնամած դեռ փոքր վարունգը քաղելո՞ւց, թե՞ մեջքի ցավից: Տատս փայտե խրտվիլակի շորերն է փոխում: Ամեն առավոտ փայտե ամուսնու վարտիք-վերնաշապիկը փոխում է: Փայտե ցցին պապուս երիտասարդ ժամանակվա գորշ գլխարկն է: Ջուչելին բարձրաձայն պատմեց, որ իրեն քած ասեց, անպատվեց, որ էլի մեջքի նույն ցավն է զգում: Ջուչելի աջ ձեռքին փորագրած էր՝ անբախտ տղա: Տատս բռնում է ձեռքերն ու երգում: Տատուս երգը պապուս զգոնությունը թուլացնելու միակ ելքն է:

Պապուս մահամերձ որջը և ազատ աշխարհը... ուր ոչ ոք չի գնում լեռներում ազատ լինելու, որովհետև այնտեղ չկա մեկը, ում ցույց տաս ազատությունդ... ուր մարդիկ ամենուր աչքդ են կոխում իրենց չստացված ազատությունը... Պիրսինգներ... լեսբոսներ... պլան... հավատացյալներ... Ցուցադրական ազատություն, որ բջջային չի պահում, բայց տան հեռախոսն անընդհատ ինքն է վերցնում...

Հիմա էլ ես, քեզանից հեռանում եմ գնացքներով, ավտոբուսներով, տխրելով, քեզանից ամենաազատից ու անազատից, մեծացել եմ, գնում եմ պապիս սպանելու, որ ազատ լինի տատս, նրա ծեծերից թարախոտ ականջով քեռիս... բարդույթներով հիվանդ մայրս...

Գնում եմ, որովհետև երեկոների մենակությունը և տան վարձը այլևս ձանձրալի են... Պապս, կեղտի կտոր պապս մահանա էր... Մահ ա նա...

Գնում եմ, որովհետև իմացա՝ ըմբոստությունը խեղճությունից է...

Եվ Աստված արարել է հսկայական կետեր...

Ծով, ցամաք, երկինք...

Լաց լինելու չափ ազատ կետեր...

Պստիկ, մատիկների մեջ տեղավորվող կետեր...

Ես էլ եմ ուզում փչել գորտին, թել կապել ու կանաչ փուչիկներով թափառել քաղաքում...

Ասեց մեղավոր մարդ չկա... դո՛ւ ասացիր, տես հա՜...

Քիչ էր մնում հավատայի, թե արվեստն ինձ տալու է իմ

ՆԱՌԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ազատությունը ու մնացի շվարած. արվեստի հավերժությունը ենթադրում է մենակություն՝ բոլորին մահվան մեջ կորցնելու վախ...

Պապուս սպառնագին դեմքը հիշեցի...

Պապս մեռավ:

Մեռած մարմինը դեռ չէր խաղաղվել, դեմքի մկանները լարված ինձ էին սպասում:

Ծնոտը գանգին կապել էին կարմիր ժապավենով, մեջտեղում էլ կապ էին գցել, ծաղիկ սարքել, տպավորություն էր, թե արյունը ելել, լերդացել, գանգի կենտրոնում ծաղիկ էր դարձել: Տատս մեծ հաճույքով էր հոգացել: Թոռներով ուրախ թաղում էինք կազմակերպելու. պապիս էի խոստացել, ասել էր՝ ամոթ քեզ...

Սենյակում հոտ կա: Որոշվեց, որ այնուամենայնիվ հերձեն: Եկավ դասաբը, նրա փորոտիքը լցրեց թասն ու դրեց փոքր քեռուս ձեռքերի մեջ: Պատուհանից տեսա՝ քեռիս թասը ձեռքին մոլորված ման էր գալիս պապուս բոստանում: Երևի հարմար տեղ էր փնտրում, որ իր ականջի հիվանդությունն էլ հետը թաղեր: Վերջում թթենու տակը փորեց, թաղեց: Հաջորդ տարվա թութը պապուս աղիքների համը կունենա:

Ճիշտ ես ասում, թե ըմբոստությունը անկարողությունից է...

Հա հարցնում եմ՝ երբ երակներդ կտրել ես, ցավացել է՞...

Կանխում ես հետագա ըմբոստությունը... թե՞ ազատությունը...

Շաաաաատ,-ասում ես...

Ազատությունը մեծ անտարբերությունն է...

«««« էջ 1

Ññ×íáõÙ »Ý »ñÇï³ë³ñ-¹áõÃÛ³Ý å³ñïáõÃÛ³Ùµ, ¹³ï³å³ñïí³Í »Ý Ñ³ÕÃ³Ý³Ïáí: ÆëÏÙ»Ýù ß³ñÅíáõÙ »Ýù՝ ³ÝÏ»ë»Éáí å³ñïáõÃÛáõÝÁ. Ù»½ å»ïù ¿ ß³ñáõÝ³Ï³Ï³Ý å³ñïáõÃÛáõÝ. Ï³Ý·Ý³Í ÏÛ³ÝùÇ ½³ñÏ»ñ³ÏÇÝ Ù»Ýù å³ñ³Ý »Ýù Ë³ÕáõÙ, ÃéãÏáï»Éáí ³ßË³ïáõÙ å³Ñ»É éÇÃÙÁ. ·ÝáõÙ »Ýù ³ßË³ï³ÝùÇ, ¹áõñë »Ýù ·³ÉÇë, áõ ³Ýí»ñç Ýáñ ³ßË³ï³Ýù ÷ÝïñáõÙ, ûñí³Ù»ç Ñ³Ý¹ÇåáõÙ »Ýù ã·Çï»ë áõÙ, ã·Çï»ë ÇÝãÇ Ñ³Ù³ñ, ³ïáõÙ »Ýù ÙÇÙÛ³Ýó áõ ëÇñáõÙ, Ñáõë³Ñ³ïíáõÙ »Ýù ÙÇ³Ý·³ÙÇó áõ ³Ý³ÏÝÏ³É á·¨áñíáõÙ, Ùáé³ÝáõÙ »Ýù, áñ ãáõÝ»Ýù ³ÝÓÝ³Ï³Ý ÏÛ³Ýù, Ñ³Û»ÉáõÝ Ñ³-Ùá½áõÙ »Ýù, áñ ·»Õ»óÇÏ »Ýù: àõÝ»Ýù ³ÝÃÇí ·³Õ³÷³ñÝ»ñ, áñ ³Û¹å»ë ¿É ÙÝáõÙ »Ý, áñå»ë ³ÝÃÇí ·³Õ³÷³ñÝ»ñ, Ñ³ñ-Ù³ñ ï»Õ »Ýù ÷ÝïñáõÙ ë»ùëÇ Ñ³Ù³ñ, ëÇñ³Ñ³ñíáõÙ »Ýù, ³ÙáõëÝ³ÝáõÙ áõ ÷áßÙ³ÝáõÙ Ï³Ù՝ ëÇñ³Ñ³ñíáõÙ »Ýù, ³ÙáõëÝ³ÝáõÙ áõ »ñç³ÝÏ³ÝáõÙ, áõ½áõÙ »Ýù Ù»éÝ»É, Ñ»ïá ³å ñ»É, µ³Ûó Ù»éÝ»ÉáõÓ Ñ»ïá áã áù ãÇ ³å ñáõÙ, ÇëÏ ³å ñ»ÉáõÓ Ñ»ïá áã áù ãÇ Ù»éÝáõÙ, áõ½áõÙ »Ýù ï³é³å»É ¨ Ç óáõÙó ¹Ý»É ï³é³å³ÝùÁ, Ù»Ýù ³åñáõÙ »Ýù, »ñµ ³åñáõÙ »Ýù ¨ ·ñáõÙ »Ýù, »ñµ ·ñáõÙ »Ýù, Ç í»ñçáë³ ½·³óÙáõÝùÝ»ñÇ ÙÇ å³ñ³Ñ³Ý¹»ë ¿, áñï»Õ ÙÇïùÁ Ññ³íÇñí³Í ã¿, µ³Ûó Ñ³Ùµ»ñáõÃÛ³Ùµ ë»ñïáõÙ ¿ ³å³·³ÛÇ Çñí³ÉëÁ:

¶»Õ»óÏáõÃÛ³ÝÁ Ñ³ëÝ»Éáõ Ñ³Ù³ñ å»ïù ¿ ·»Õ»óÇÏ ÉÇÝ»É: ºñÇï³ë³ñ¹áõÃÛáõÝÁ ·»Õ»óÏáõÃÛáõÝ ¿՝ í³ÛñÇ ÷ß³Ã÷»ñáí, áñ ï³ÉÇë ¿ ùÇÙùÇÝ ³ÝÍ³ÝáÃ ÃÃí³ß åïáõÕÝ»ñ. Ù³ñëáõÙ »Ý ùã»ñÁ: Ð³ëáõÝ åïáõÕÝ»ñÁ ÑÛáõÃ»Õ »Ý, ³ãù ßáÛáõ, µ³Ûó ÙÇ³ÛÝ ÃÃí³ß åïáõÕÝ»ñÝ »Ý ëïÇåáõÙ ß³ñÅí»É ëï³ÙáùëÑ³ÑÛáõÃÁ:

ºë ³ïáõÙ »Ù »ñÇï³ë³ñ¹áõÃÛáõÝÁ ÙÇ³ÛÝ ³ÛÝ µ³ÝÇ Ñ³Ù³ñ, áñ ÙÇ ûñ Ý³ïñí»Éáõ ¿ ÙïùÇÝ, ÏáñóÝ»Éáõ ¿ ½·³óÙáõÝù-Ý»ñÁ ¨ Ñá·áõ ³Û¹ù³Ý ó³íáï áõ Ñ³×»ÉÇ Ù»É³Ù³ÕÓáõÃÛáõÝÁ, ãÝ³Û³Í, »Ã» ³ÏÝ-Ã³ñÃÁ Ñ³í»ñÅáõÃÛáõÝ ¿, áõñ»ÙÝ Ù»Ýù öàðÓºÉàõ »Ýù öàðÓºÉ ³é³Ýó å³-ï³ëË³Ý³ïíáõÃÛ³Ý, ³é³Ýó Ñ»éáõÝ ï»ëÝ»Éáõ՝ ½·³ÛáõÝ, ÇÝãå»ë Í³éÁ ¨ ³-½³ï, ÇÝãå»ë ÃéãáõÝÁ:

´³ËÝ Çñ É³í³·áõÛÝ Ï³ÝÏ³ïÝ»ñÁ ·ñ»É ¿ »ñÇï³ë³ñ¹ ï³ñÇùáõÙ: Üñ³ Ù³ï-Ý»ñÝ ³Õ»ÕíáõÙ »Ý áõ ÏÍÏíáõÙ: ²Ñ³ñÏáõ ëïí»ñÁ ÃñÃéáõÙ ¿ ÙáÙÇ ÉáõÛëÇ Ý»ñùá, Ï»Õ-Í³ÙÁ ÁÝÏ»É ¿ Ñ³ï³ÏÇÝ, áïù»ñÇ ÙÏ³ÝÝ»-ñÁ áõñ áñ ¿ Ïå³ÛÃ»Ý, »Ï»Õ»óáõ å³ï»ñÁ ¹Õñ¹áõÙ »Ý »ñ·»ÑáÝÇ Ë»É³Ñ»Õ ï»ÙåÇó. Ñ³ÝÏ³ñÍ ³Ù»Ý ÇÝã Ã³Õíáõ՝ ¿ ÉéáõÃÛ³Ý Ù»ç. ´³ËÇ Ù³ï Ý»ñÁù³ñ³ÝáõÙ »Ý û¹áõÙ áõ Ñ»ïá ¹³Ý¹³Õ áõ Ù»ÕÙ Ñåíáõ՝ ëï»Õ-Ý»ñÇÝ. ëÏëíáõÙ ¿ »ñÇï³ë³ñ¹áõÃÛ³Ý Ó³ÛÝÁ, áñÝ ³ÛÝù³Ý Ùáï ¿ ²ëïÍá Ó³ÛÝÇÝ:

ԱՐԱՄ ՊԱՉՅԱՆ

“Actus Tragicus”*

**“Actus Tragicus”- BWV 106, Յոհան Սեբաստիան Բախի (1685-1750) կանտատը*

***Ալեկսիա- անխոսություն*

ԼԻԼԻԹ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Մենախոսություն երկու ձայնով

Այս բնակավայրը, ուր գետակներ են հոսում քարքարոտ հուներով և առատորեն աճում է քարաքոսը, ուր այժմ խոնավ պատերով խարխուլ տներ են մնացել միայն՝ մարդիկ լքել են ընտանիքներով կամ մենակ: Միաժամանակ: Տարբեր ուղղություններով: Հանկարծակի: Անհայտ պատճառներով, ինչպես մայաները դարեր առաջ, երբ դաշտն այրելուց հետո հեռացան իրենց բնակավայրերից՝ թողնելով հողն առանց վկաների:

Հազվադեպ են հանդիպում օտար դեմքերը: Ամեն ինչ տպվում է հիշողության մեջ, չի մոռացվում ու չի ներվում: «Սեպտեմբերի տասնչորս: Այն օրը, երբ դեղին ավտոբուսը գալիս է այստեղ: Ես գնում եմ»,- ուղիղ հինգ տարի առաջ ասել էր էլյայի մայրը:

Ավտոկանգառի ժանգոտ ու մոռացված հովանոցի տակ արևից պատսպարվող աղջիկը կկոցել էր աչքերը: Նա լիաթոք շնչեց շուրջը տարածված վայրի ուրցի բույրը: Հաճելի քաղց զգաց: Ոտապարկում թխվածքաբլիթի փշուրներն էին միայն մնացել: Թերմոսով ջրի կողքին լոլիկ գտավ, որ ապահովության համար էր վերցրել՝ ամեն դեպքում, եթե ավտոբուսը ուշանա: էլյան առջևի ատամներով ծակեց բարակ կեղևը ու ծծեց լոլիկի հյութը, որը դանդաղ հոսելով պարանոցի վրայով՝ կեղտոտեց շրջազգեստը: Եթե մայրը այստեղ լիներ, կբարկանար վրան: էլյան մերկացավ. միևնույն է շուրջը ոչ ոք չկար, իսկ գետակի մեղմ քչքչոցը հուշում էր լողանալու հնարավորության մասին, բայց վախը, որ թաց- թաց ավտոբուս բարձրանալ վարորդը թույլ չի տա, ետ պահեց նրան: Նոր ընտրած շրջազգեստին պակասում էր միայն արևային գլխարկը: Չէր հիշում ուսապարկի որ գրպանում դրեց, բայց վերջին պահին այնուամենայնիվ վերցրել էր: Քիչ հեռվում հակառակ ուղղությամբ ընթացող ավտոբուսը կանգ առավ՝ ուղևոր հավաքելու հույսով, սպասեց մինչև աղջիկը հավաքի գետնին թափած ուսապարկի իրերը: Երբ վարորդը որսաց աղջկա հայացքը՝ սեղմեց կոճակն, ու առջևի դուռը բացվեց.

- Սա՞ է դեղին ավտոբուսը,- դիմեց էլյան վարորդին ու շիկնեց անտեղի հարցից. պարզ երևում էր, որ ավտոբուսը դեղին է: Առանց պատասխանի սպասելու՝ աստիճաններով բարձրացավ: Սրահում ոչ ոք չկար: Դուռն արագորեն փակվեց, լսվեց շարժիչի ձայնը. ավտոկանգառը մնաց հեռվում:

Հրաժեշտի թախիծը հիշեցրեց ծուռումուռ ցածր բլուրները, ուր սիրում էր առանձնանալ բոլորից: Մենակության մեջ իրեն գտնում էր ճարպիկ մողեսներով շրջապատված, որ կտրտված քարերի վրայով մագլցելիս թողնում էին պոչը էլյայի ափի մեջ. այժմ ուսապարկի ամենափոքր գրպանում պահում էր առաջին բռնած մողեսի պոչը. ասում են հաջողություն է բերում: Նստարանների դատարկությունը չէր համապատասխանում այն անհավանական լուրերին, որ շրջում էին այս բնակավայրում. դեղին ավտոբուսը միայն հատուկ կանգառներից էր ուղևորներ վերցնում՝ համբերատար սպասելով, մինչև բոլորը բարձրանան: Ուշացողները մնում էին կանգնած, կախվում չփակվող դռներից, պատմում էին՝ մի կին հարմար չբռնվելու պատճառով ընկել է, բայց ավտոբուսը շարունակել էր իր ընթացքը: Հասարակական փնտրտուքները որևէ արդյունք չտվեցին. տղամարդիկ որսի ժամանակ մի գիշերվա ընթացքում սանրել էին անտառը, կանայք փեշերը հավաքած մտել գետը՝ սպիտակեղենը լվանալու և փնտրելու կապտած իգական աչքեր: Կնոջ մարմինը չկար:

Վարորդը զգուշորեն անցավ ցեխաջրով լի փոսերի վրայով ու մտավ գլխավոր մայրուղի: Ավտոբուսը առաջին անգամ կանգ առավ ծռմռված մետաղյա հովանոցի մոտ, որտեղ փակ աչքերով կովը կծկվել էր ստվերում: Միայն պոչն էր դուրս մնացել ստվերից, ժամացույցի սլաքի նման աջ ու ձախ էր ճոճվում՝ քշելով ճանճերին: Լսելով ազդանշանը՝ նա բացեց աչքերը. ավտոբուսը տպվեց կովի խոնավ հայացքում: Առջևի բաց դռնով հապշտապ բարձրացավ, անհանգիստ նայեց շուրջը, աղջկան գրեթե չնկատելով՝ ետևի դռնից նետվեց դուրս: Կովը անհուսորեն վազում էր, ուզում էր ազատվել ավտոբուսի դանդաղ, բայց երկարատև հետապնդումից: Երբ հանձնված կանգ առավ, ճանճը նստեց նրա թարթիչին: Ավտոբուսում բացակա ուղևորների նստարաններից նա ընտրեց էլյայի կողքինը, որ պատուհանի մոտ էր՝ անմիջապես օդանցքի տակ: Դրսից փչող քամին իր հետ բերեց ճամփեզրին աճող անջրդի ծաղիկների բույրը: Կովը հոտոտեց օդը, հետո դունչը մոտեցրեց էլյայի լայնեզր գլխարկին ու արհեստական ծաղիկներից խաբված՝ ետ քաշվեց:

- Տզ՜զ,- ասաց ո՛չ կովը, ո՛չ աղջիկը: Ճանճն էր: Թռավ օդանցքից դուրս: Այլևս չի վերադառնա:

Փոշոտ քամով օդ բարձրացած հնամաշ հագուստի ծվեններն ու բզկտված տերևները կովին ընկղմեցին հիշողության հորձանուտը: Նույնիսկ էլյայի ձայնը, որ ասում էր՝ «Կարող ես փակել պատուհանը», չսթափեցրեց նրան: Օդում պարող իրերը հանձնվել էին քամու քմահաճույքին: Չորացած տերևները ապակուն բախվելով՝ փշրված թափվեցին, իսկ հնամաշ հագուստի ծվենները քրքրվեցին եղևնու փշերից՝ մաքառելով ճյուղերի արանքում: Կովի խոշոր, կլոր աչքերը որսում էին ժամանակի յուրաքանչյուր պահը: Ի վերջո անհանգիստ հայացքը գամվեց պատուհանից դուրս մի անհայտ կետի: Չնայած շարժումը փոխում էր բնապատկերը՝ հինը թողնելով անցյալում ու անընդհատ ավելացնելով նորը, կովն անթարթ նայում էր միևնույն կետին:

«Նա գնաց պարանոցի զանգակը թաղելու հողի տակ: Հորթուկը արդեն մեծ էր, ժամանակն էր, որ ազատվի իր խաղալիքից:

- Կարողացա՞ր,- հարցրի ես

- Այո, բայց խորը չեմ թաղել:

Ապաստարանի փայտյա դռան մոտ, երբ փորձում էինք գաղտնուղիով անցնել անտառ տանող արահետը, բոլորին բռնեցին: Քամին անհայտ ուղղությունից բառաչյուն էր հասցնում `բացառելով մենությունը, ու չնայած հողը դողում էր սմբակների դոփյունից, շուրջս հյուծվում էին ու անհետանում»:

էլյան ամուր գրկած պայուսակը գրեթե մոտեցրել էր դեմքին, ուր գծագրվում էին ափսոսանքի առաջին նշույլները :

«Ես հավատում եմ երկարությանը:

Երկարություն, որը չի հատվում, կանգ չի առնում և չունի վերջ: Ինչպես այն ճանապարհը, որ տանում էր ինձ ու մորս անհայտ ուղղությամբ՝սնելով պատահական հատապտուղներով, որովհետև, երբ հեռացանք տանից, չհասցրինք լավաշ ու պանիր վերցնել: Իսկ դրանից առաջ աղմուկ էր, ավելի առաջ՝ իմ ճիչը. ես ծնվել էի, ավելի ու ավելի առաջ՝ սկուտեղների մեջ պարող գույնզգույն մրգերը, երաժշտական գործիքների հարսանեկան նվագը, բայց ի սկզբանէ կրակն էր:

Ես տեսա մորս, հոգնած ընկած ինչ-որ մեկի հիշատակին կառուցված աղբյուրի կողքին, հետո՝ գլուխը հարվածող ջրի տակ պահած շշնջալիս. «Այլևս չեմ կարող»:

Լռության մեջ լսվում էր ավտոբուսի շարժիչի միօրինակ ձայնը, որ խոսում էր բոլոր ներկաների ու բացակաների փոխարեն:

«Ես չգիտեի որտեղ եմ: Փշալարերով շրջապատված՝ տեսնում էի ինչպես են հսկիչների վրանների առջև տակառներով խմիչք բերում: Վատ կանխազգացում ունեի:

- Ցեխ քսի՛ր երեսիդ,- ասացի կողքիս պուտիկավոր կովին:

Նա չարձագանքեց ինչպես մյուսները, որ կորցրել էին լսելու ունակությունը: Մի ամբողջ բազմություն, որի կաթի առուները կջրեին ցորենի ճաքճքած դաշտերը, ու այլուրից պատրաստված անթթխմոր հացը կաթնահամ կլիներ: Հարբած հսկիչներն օրորվելով մոտենում էին մեզ, ավելի ու ավելի մոտ, նրանցից ոմանք՝ չորեքթաթ դիցաբանական էակի նման, լեզուն դուրս գցած: Մյուսները երկարավուն գլխարկներով ու զինված: Հսկիչներից ամենաբարձրահասակը, որ կանգնած էր առջևում, բարձրաձայն ասաց.

- Դուք կով եք, ուրեմն պիտի կթվեք:

Փշալարերից այն կողմ աճող թարմ խոտը սաստկացնում էր սովի զգացումը, իսկ տակառներով խմիչքը՝ ծարավը: Մենք օրերով խոտ չէինք կերել, ջուր չէինք խմել, ու կաթը տվել էինք հորթերին: Մենք ճանապարհ տվեցինք հսկիչին, ինչպես Կարմիր ծովը, որ բաժանվել էր երկու մասի: Նա անցավ մեր միջով դեպի խորքը, ու միայնակ մնացած սպիտակ պուտիկներով կովը խոնարհեց վիզը:

- Ես ուզում եմ կաթով գինի խմել:

Գինով լի լայնաբերան թասը դրեց համապատասխան տեղ, ու ծնկի իջնելով կովի առջև՝ սկսեց կթել:

Կաթ- կաթ

Կաթ- կաթ:

Երեկոյան անձրևի բյուրեղացած հատիկները ընկան թասի մեջ: Հսկիչը բարկացած հայհոյեց ու մտրակեց կովին: Հարբած էր, թրմփած ցած, երեսին ցեխ քսվեց:

Ամբողջ գիշեր հսկիչի վրանից լսվում էր կովի բառաչյունը.

- Բո՜ո...»

էլյան զգուշորեն մոտեցավ վարորդին: Նրա անշարժ, սառը հայացքը, որ ճանապարհի ուղեգծից չէր կտրվում, արգելեց աղջկան հարցնել, թե երբ են տեղ հասնելու:

Բարձր բարդիներին փոխարինեցին նոճիները հետո գլխիկոր ուռենիները, երբեմն բլուրաման ավազակույտեր էին երևում կամ կիսակառույց շինություններ, որոնց նշանակությունը դժվար էր կռահելը: էլյային թվում էր՝ պատուհանից դուրս նայելիս ժամանակն ավելի արագ է անցնում:

«Վայրի ու թափառող օրերից հետո փայտյա տնակը մեզ հանդիպած միակ օթևանն էր: Խաղողի որթի հյութեղ տերևները ծածկել էին տան պատուհանները: Խնամքի ոչ մի հետք չէր հուշում բնակիչների գոյության մասին: Մայրս բարձրացավ քարի վրա, հետո ձգվեց, որպեսզի խաղող քաղի ինձ համար: Նրա ծնկներն ամուր գրկած՝ բարձր-բարձր ոգևորում էի նրան: Տերևների շարժումից, իսկ ավելի հավանական է՝ մեր ձայներից, բնակիչները հասկացան, որ դրսի մարդիկ մոտեցել են իրենց տանը: Առաջինը դուրս եկած ծերուկի ձեռնափայտը մնաց օդում, երբ տեսավ ինձ ու մորս : Նրա կողքին հայտնված կինը բարկացած նայում էր մեզ: Քիչ հեռվում տղամարդն էր (հավանաբար նրանց որդին), որ խոժոռ հայացքով զննում էր մորս: Նրա մորուքը նույնքան առատ էր աճել ու ծածկել դեմքը, որքան խաղողի տերևները՝ տան լուսամուտները: Համոզվելով, որ անվտանգ ենք՝ հրավիրեցին ներս, խաղող ուտելու: Կինը բացեց կեղտոտ ապակիներով պատուհանը, դանակով մեծ ողկույզ կտրեց ու անլվա դրեց սեղանին:

Հյուրասիրության համար բազմիցս շնորհակալություն հայտնելով՝ որոշեցինք հեռանալ:

- Ու՞ր եք գնում, ճամփին մի բան կպատահի,- ձայնին անհանգստության երանգ հաղորդելով, ասաց տղամարդը: Իրականում այսպես էր. «Ոչ մի տեղ էլ չեք գնա: Այս տանը շատ գործ կա անելու»:

Հաջորդ օրը մայրս էտում էր խաղողի որթը: Ես բակի ավազների մեջ գլխահակ՝ երկրաչափական տարբեր պատկերներ էի կառուցում ու կայծքար փնտրում, որ կրակ ստանամ»:

Վարորդը մի պահ դանդաղեցրեց ավտոբուսի ընթացքը, որպեսզի կրակայրիչը մոտեցնի ծխախոտին: Նա պատկանում էր մարդկանց՝ մինչև վերջին ժամանակներս պահպանված այն խմբին, որ կրակը հայտնաբերելով՝ չէր մոռացել օգտագործման ձևը: Այդ մարդիկ ժամանակ առ ժամանակ խարույկ են վառում ու պտտվում շուրջը կամ թռչում վրայով: Աստիճանավոր տաճարներ կառուցող մայաների նման, նրանք նույնպես բազմաթիվ տաճարներ են ունեցել, որոնք քանդվել են երկրաշարժերից, բայց այդ կառույցներից մեկում մինչև այժմ պահվում է անմար կրակը, որպեսզի մարդիկ չմոռանան կրակի գյուտը:

Կովն անաղմուկ հակվեց դեպի աղջիկը՝ համոզվելու համար, որ նա քնած է: Նրա բրոնզյա ծանր ճակատակալի հատիկները կենտրոնից հեռանալով՝ փոքրանում էին, իսկ կենտրոնի ամենախոշոր հատիկից իջնող յոթ կախիկները զնգզնգում էին:

«Հսկիչները վառվող ջահերով հրկիզեցին խոտի չոր դեզերը ու շուրջը լուսավորվեց: Մենք բնազդաբար ընկրկեցինք կրակից: Չնայած դեռ ամեն ինչ կորած չէր: Լուրեր էին տարածվել, որ մոտակայքում ապստամբել են, սպանել են ու սպանվել: Մենք նույնպես կապստամբենք: Չէ, չէ, մեզ կգան օգնության, մեզ կփրկեն: Մենք կով ենք, կաթ ենք տալիս, կխղճան: Հորթերին կխնայեն:

Հսկիչը դանդաղ բարձրացրեց կեռ սուրը՝ օդում աղոթանման բառեր արտասանելով: Ես համոզված չեմ, պարզապես սպանե՞ց, թե զոհաբերեց սև կովին: Վառվող դեզերի կողքին շուտով մարմինների կույտեր գոյացան: Համընդհանուր բառաչյունի ներքո ծագեց արևը ու փոխարինեց հանգչող խարույկներին:

Ոչ հեռու թփերի մոտ հնամաշ զինվորական հագուստով կերպարանք նկատեցի: Նա, բոլորից աննկատ, փոքրիկ դույլով հատապտուղ էր հավաքում, միևնույն ժամանակ՝ հետևում մեզ:

Արևի տակ փայլող ցցասյուների մոտ շրջան կազմած՝ անշարժացել էինք: Ակնթարթային հարվածից մեզնից ամենատարեցը երերալով տապալվեց գետին:

Մեկ, երկու, երեք... հինգ...

Գլուխներ՝ ցցասյուների վրա:

Մի ամբողջ նախիր նայում էր վեր ու բառաչում.

- Բոո՜...

- Ո՞ւր է ձեր տերը, թող գա, փրկի ձեզ,- լսվեց հսկիչի ձայնը:

- Իսկ մեր նախրապանը որտե՞ղ է ,- հարցրինք միմյանց:

Խառնաշփոթի միջով ես փնտրում էի զինվորական հագուստով մարդուն: Նա թփերի ետևում թաքնված՝ կապույտ աչքով լաց էր լինում , մյուսն՝ ապակուց էր»:

Ավտոբուսը նման էր լռության մեջ ընթացող ինքնագնացի: էլյայի հույսով լի դիմա- մկաններն այլևս պրկված չէին: Ուշադրություն չդարձնելով ուսապարկից թափված իրերին՝

աղջիկը խորասուզվել էր մտքերի մեջ:

« Բակից սուր ճիչեր լսեցի: Մայրս ընկած էր արևի տակ չորացող բրդերի մեջ: Քամին փռփռացնում էր լվացքն ու մորս կապտած ազդրերը ծածկող լայնափեշ շրջազգեստը:

Ես վազեցի աղբյուրի մոտ, ուր մտահոգ կանգնած տղամարդը, ծամածռելով դեմքը՝ դանդաղ ծխում էր:

- Ես հոգնել եմ,- մոտենալով ինձ՝ ասաց մայրս,- գնում եմ:

- Ինձ էլ տար քեզ հետ:

- Դու ծանր ես, չեմ կարող գրկել:

Մայրս հեռանում էր:

- Հիշի՛ր ինձ, սեպտեմբերի տասնչորսը,- ասաց նա,- նաև՝ դեղին ավտոբուսը: Առայժմ: Մի օր կհանդիպենք:

Ոչ ոք չգիտեր՝ իրականում ինչ է պատահել: Մայրս չկար: Նրա մարմինը նույնպես չէին գտել: Մոտակայքի ողջ բնակչությունը, նույնիսկ թախտին նստած ծերունիները, որոնց լայնացած երակներով ոտքերն ամբողջ տարին տաք գուլպաների մեջ են, փնտրել էին մորս:

Երեկոյան, հրացանը ուսին դրած տղամարդը հոգնատանջ վերադարձավ տուն:

- Մոռացի՛ր նրան, մայրդ այլևս չկա,- ասաց նա:

Ես ավազների մեջ պառկած՝ սպասեցի մինչև ուշ երեկո: Մոտեցա տանը, որպեսզի լիալուսնի ներկայությամբ այրեմ խաղողի որթը: Ես չկարողացա կայծքարից կրակ ստանալ: Բայց չմոռացա մորս, սեպտեմբերի տասնչորսը ու դեղին ավտոբուսը»:

Շնչելիս՝ կովի մորթու մազերը բարձրանում–իջնում էին: Նա նախկինի պես ծանրամարմին ու տձև չէր թվում:

«Վառվող դեզերի ու ցցասյուների մոտ հսկիչը հրահանգել էր.

Բոլոր հորթերը՝ մի քայլ առա՛ջ:

Հուսահատ բառաչյուններն ու ճանապարհը սեփական մարմնով փակելը ապարդյուն էին: Հորթերի դիմադրությունը նույնպես արդյունք չտվեց:

- Քեզ շատ վատ ես պահում: Դու վատ հորթ ես,- լսվեց հսկիչի ձայնը:

Իմ ականջներում հողի տակ թաղված բոլոր զանգակների ղողանջյուններն են: Վերջին հորթուկը նույնպես ընկավ:

- Տո՛ւր ինձ պատանդի ձաղկված մաշկը:

Այլևս ոչինչ չեմ հիշում: Ես շնչահեղձ կլինեի, եթե զինվորական հագուստով տղամարդը չփրկեր ինձ մարմնակույտերի տակից: Նա ջուր ցողեց վրաս ու սև հաղարջ տվեց: Հետո վազել եմ, անցել եմ Բ արահետը, տրորել այրված խոտը, անցել գետը, հասել ավտոկանգառ ու բարձրացել ավտոբուս»:

էլյայի բաց շագանակագույն մազերն առաջվա պես անկենդան չէին: Ավտոբուսի միապաղաղ ընթացքը ցնցում էր աղջկա ուղիղ մազերը, որ իջնում էին ուսերին:

Ես հեռանում եմ:

Ես՝ նույնպես:

Այնտեղ պատանդի մորթուց պայուսակ ու լուսամփոփ չկա:

Ես կգտնեմ մորս:

Երբ տեղ հասնեմ, կմոռանամ:

Ավտոբուսը կանգ առավ: Ոստիկանը մոտեցավ վարորդին:

Սահմանն անցնելու համար ոստիկանը պահանջում էր էլյայի ու կովի անձնագրերը:

« Ես վախենում եմ, բայց կովն ինձ հետ է »,- աղջիկը գրկեց կովի պարանոցը ու զգաց մորթու ջերմությունը:

«Այս անգամ ես կկրակեմ: Կկրակեմ...օդ»,- մտածեց կովը:

Դիմապակուց այնկողմ երկհարկանի բուրգերն էին, խլրտացող զրահամեքենաները և աստծուն հասնող ժպտադեմ աշտարակները:

Հայաստանյան ամեն ինչում ներկա է Ոգին

Վերջերս ԱՊՀ և Բալթյան երկրների թարգմանիչների և հրատարակիչների չորրորդ համաժողովի առիթով Հայաստան այցելած Իլդար Աբուզյարովին համարում են Ռուսաստանի ամենատաղանդավոր երիտասարդ արձակագիրներից մեկը, տասը տարի առաջ գրված նրա առաջին՝ «Ձիների աշունը» վեպը սպառվեց հաշված օրերի ընթացքում, նրա պատմվածքները հրատարակում են համարյա բոլոր գրական հանդեսները, նա բազմաթիվ գրական մրցանակների դափնեկիր է, Հայաստան առաջին անգամ է այցելում, թեև վաղուց երազել է լինել այս երկրում։

- Երևանը շատ դուրս եկավ, քաղաքը ոտի տակ տվի ծայրից ծայր: Ձեր քաղաքը պաշտամունքային այն քաղաքների շարքին եմ դասում, որոնցում հաջողվել է լինել: Փարիզը ճերմակ քաղաք է, Հռոմը՝ վարդագույն, Կահիրեն՝ դեղին, Երևանը՝ մուգ վարդագույն: Այս հնամենի քաղաքն ունի ճարտարապետական իր ուրույն, անկրկնելի ոճը, նրանում զգացվում է դարավոր իմաստնականության ներկայությունը, նույնիսկ գերժամանակակից ճարտարապետական լուծումները ներդաշնակում են հնին: Ուրախացրեց ջազային բարերի առատությունը: Քաղաքում ստեղծագործական թեթև մթնոլորտ է տիրում՝ նկարիչներ, երաժիշտներ... Երևում է, որ այս քաղաքը մարդկանց համար է, այլ ոչ՝ մեքենաների, ինչպես, ասենք, Մոսկվան: Ես ինձ զգում էի այնպես, ինչպես եվրոպական հայտնի մշակութային կենտրոններում, Երևանի մթնոլորտն ինձ համար շատ ոգեշնչող էր: Հայաստանյան ամեն ինչում ներկա է Ոգին:

- Հատկապես ի՞նչը շատ տպավորեց:

- Եղա Օշականում, խոնարհվեցի հայոց գրերը ստեղծողի առաջ. հենց նման մարդկանց առաջ է պետք խոնարհվել: Ի սկզբանե Բանն էր, և ուրեմն մեծագույն հարգանքի են արժանի այն մարդիկ, ովքեր հնարավորություն են տվել այդ Բանը փոխանցել գրավոր: Ինձ համար շատ կարևոր էր լինել Օշականում, այդպիսի վայրերում ապրում ես զգացումներ, որ ենթագիտակցության խորքային լարերին են դիպչում. գրային ներարկում անել մի ամբողջ ժողովրդի՝ անչափելի երախտիք է: Բյուրականի աստղադիտարանում եղա, Գեղարդի վանքում, Էջմիածնում, Զվարթնոցում... Հոյակապ էր:

- Ի՞նչն է ձեզ հուզում, որպես երիտասարդ գրողի:

- Հիմնականում՝ գեղագիտական և սոցիալական կողմը: Զգացողություն ունեմ, թե մարդկությունը մտնում է փակուղի, գրականությունը՝ նույնպես: Կարծում եմ՝ սա զգում են մեր ժամանակի մեջ ապրող բոլոր մարդիկ: Այս թեման ինձ սկսեց հուզել, երբ դիմեցի վեպի ժանրին, մինչ այդ գրում էի պատմվածքներ, որոնք առավել մեդիտացիոն-գեղագիտական ուղղվածություն ունեին: Մեր ոչ հերոսական ժամանակներում, երբ անհատը ապակողմնորոշված է, մասնատված-ցրված, հնարավոր է՝ չհայտնվեն նոր Տոլստոյներ և Դոստոևսկիներ, սակայն ձգտել դրան հարկավոր է: Վաթսունականների, յոթանասունականների սերունդներն այսպես թե այնպես իրենց խոսքն ասացին, իսկ մեր վիճակը շատ դժվարին է, դաշտն ամբողջապես տրորված է, յուրաքանչյուրս մենակ է կանգնած չընթերցող հասարակության առաջ, համաշխարհային մշակույթի ահռելի գանձարանի և ամենակուլ զանգվածային մշակույթի առաջ: Այնուամենայնիվ, արեգակի տակ տեղ գտնելու մեր պայքարը շարունակվում է:

- Հայ գրականությունը մեկուսացված է. դուք ծանո՞թ եք հայ ժամանակակից գրողների ստեղծագործություններին:

- Դա, անշուշտ, ցավ է: Հիշում եմ՝ «Դրուժբա նարոդով» ամսագիրը հայ գրականությանը նվիրված համար հրատարակեց, որը կարդացի մեծ հաճույքով: Իհարկե, կուզեի ավելին կարդալ ու ճանաչել, որովհետև համոզված եմ՝ դարավոր մշակույթ ունեցող ձեր ժողովուրդը այսօր էլ շատ բան կարող է տալ աշխարհին: Ցավոք, գրքեր քիչ են թարգմանվում: Այսպիսի համաժողովներն անհրաժեշտություն են, որովհետև գրականությունը նախ և առաջ հաղորդակցություն է: Հարկավոր է թարգմանել, հարաբերություններ ստեղծել, ճանաչել մեկմեկու և փոխադարձաբար հարստանալ:

Գրողի հետ զրուցեց՝
Ելենա Շուվալաև-Պետրոսյանը

ՕՐԱԿԱՆ ՄԵԿ ԷՋ

Իլդար Աբուզյարով

Ամեն անգամ, երբ Գաբրիելը սկսում էր գրել, երբ ավարտում էր մեկ էջը, կատարվում էր ինչ-որ բան, որ խանգարում էր նրա այդ զբաղմունքին: Մերթ լույսն էին անջատում, և մարում էր համակարգիչը, մերթ ֆուտբոլն էր սկսվում հեռուստատեսությամբ, մերթ էլ Լուսիտան էր գալիս՝ բերելով տաք կարկանդակը: Եվ ահա այսպես, դանդաղորեն, օրական մեկ էջով, նա առաջանում էր իր մտահղացման ճանապարհով: Ի վերջո, կես տարի անց նա ավարտեց իր վեպի սևագիրը. ոչ բարդ թվաբանական գործողությունները պարզեցին, որ վեպը բավական փոքրածավալ է: Հետո նա մեկ օր հանգիստ տվեց իրեն՝ առավոտից երեկո, ինչպես նախկինում, թափառեց ընկերների հետ փողոցներով ու զբոսայգիներով՝ հաճախակի մտնելով այս կամ այն սրճարանը: Հաջորդ կես տարին Գաբրիելը նույնությամբ՝ անշտապ, օրական մեկ էջ, խմբագրում էր իր վեպը:

«Պարզվում է, ես մի տարում վեպ գրեցի»՝ ժպտաց իր մտքերին Գաբրիելը, որովհետև խմբագրումը հա-

մոզեց նրան՝ վեպը ստացվել է, և վատ չի ստացվել:

Հաջորդ առավոտյան նա կարծես թե ոչինչ չուներ անելու,- երկրորդ վեպը սկսել, այսպես միանգամից, դեռ չէր ուզում,- այնժամ Գաբրիելը վճռեց ինքն իրեն երես տալ՝ ձու եփեց նախաճաշին, ինչն անսովոր էր, և հետը լուծվող սուրճ խմեց մեծ գավաթով, ինչը սովորական էր, այնուհետև պառկեց բազմոցին՝ ձեռքերը գլխի տակ դնելով, և սկսեց մտածել, թե ինչով է զբաղված եղել ինքն այս ամբողջ տարի: Արագ գիտակցեց, որ վեպին այս առումով հարկ չկա առանձնապես ուշադրություն դարձնել, քանի որ օրական մեկ էջը մեծ բան չէ: Ֆուտբո՞լը... Այո, իհարկե, վատ չէր լինի երկրպագել իր կուռքին մարզադաշտում, հիստերիկ ամբոխի հետ, սակայն Գաբրիելը միշտ գերադասում էր դեմքը միայնակ ծռմռել հրճվանքից կամ հիասթափությունից, հեռուստաէկրանի առջև: Այս տարում անց են կացվել տարբեր մակարդակի մի քանի առաջնություններ, և ինքը դիտել է համարյա բոլոր մրցամարտերը: Աչքերի առաջ հայտնվեցին համարակալած մարզահագուստները, գիսախռիվ գլուխները, գնդակին խփող ոտքերը, և ինքը կարող էր ուզածդ խաղացողի անունը տալ, նույնիսկ առանց դեմքը տեսնելու՝ Զիդանը, Ռաուլը, Ֆիգուն, Ռոնալդոն, էլգերան, Ռոբերտո Կարլոսը, Մակելելեն, Օ՛Շինը... Հարյուրավոր մրցամարտեր... Սակայն բոլորը ձուլվել-մեկտեղվել էին, Գաբրիելը չէր հիշում ոչ մի մրցահաշիվ, չէր հիշում, թե ով ում հետ էր խաղում, նույնիսկ՝ ամենագեղեցիկ գոլերը չէր հիշում: «Իզուր չեմ գրառել տպավորություններս... Կարող էր հետաքրքիր վեպ ստացվել ֆուտբոլի մասին...»:

Ընկերնե՞րը... Իսկ մնացե՞լ են արդյոք ընկերներ հիմա, երբ այնքան հազվադեպ են տեսնվում. Ռամոնան և Ալոնսոն, Ուրսոլան և Ալվարեսը, Բերնալը և Ինեսը... Բերնալը և Ինեսն արդեն տասն ամիս է, ինչ ամուսնացած են: Ասում են, նրանք վերանորոգել են իրենց տունը և, չգիտես ինչու, ոչ ոքի չեն հրավիրել նորամուտի: Իսկ Ուրսոլան և Ալվարեսը Իտալիա են մեկնել հանգստանալու, և այնտեղ էլ մնացել են, գուցե՝ որոշ ժամանակով, գուցե՝ ընդմիշտ: Եվ հիմա այլևս չես լսի նրանց պայծառ դատողությունները այս կամ այն առիթով: Իսկ Ալոնսոն և Ռամոնան հակառակը՝ բաժանվել են, և ըստ երևույթին՝ Ռամոնան այլևս երբեք խեղդվելու չափ չի քրքջա իր Ալոնսոյի անճարպիկ շարժուձևի վրա: Բոլորն իրենց խնդիրներն ունեն, իրենց ծրագրերը:

Լուսիտա՞ն... Այստեղ կարծես ոչինչ չի փոխվել, նա գալիս էր, կերակրում էր նրան իր կարկանդակներով, երբեմն ինչ-որ էկզոտիկ ապուր էր եփում, օրինակ՝ Ուկրաինական բորշ, նրանք զրուցում էին, զբաղվում սիրով, զբոսնում գետափին, ֆիլմեր դիտում... Եվ ամեն բան հրաշալիորեն միապաղաղ էր: Լուսիտան չէր հոգնեցնում նրան մոնիտորի տեքստերի մասին հարցուփորձերով, որոնք, անշուշտ, տեսնում էր, բայց չէր կարդում, իսկ ինքը, չգիտես ինչու, չէր էլ առաջարկում, չէր խնդրում, չէր պնդում... Վեպն ապրում էր մի տեսակ առանձնացած, ոչ խանգարում էր իրենց, ոչ օգնում:

***

Պալոման մարմնատարած պառկած էր, մտքում գեղեցիկ անուններ էր որոնում, որոնք սկսել էր հավաքել դեռևս դպրոցում՝ գրառելով աշակերտական բարալիկ, մանիշակագույն տետրում:

Ռամոնա, Ուրսոլա, Ալոնսո, Ալվարես, Բերնալ, Ինես... Ու հանկարծ, անհասկանալի է՝ որտեղից, խեղդամահ եղածի դիակի պես ուղեղից դուրս լողաց երկարաշունչ անունը՝ Գաբրիել Գարսիա Օրասիո... Օհո՝ մտածեց նա, վատ անուն չէ հերոսի համար՝ Գաբրիել:

- Խորխե,- կանչեց նա:- Խորխե, ես տղամարդու անունը գտա, դու կնոջը գտիր:

- Պալոմա,- ասաց Խորխեն: Պալոմա՝ որովհետև այդ անունը նրան միշտ դուր էր գալիս:

- Ոչ,- ասաց Պալոման,- անհամեստություն կլինի սեփական անունը տալ հերոսուհուն: Եվ հետո, շատ հասարակ է մի տեսակ...

- Ուրեմն՝ Լուսիտա,- չկտրվելով ֆուտբոլից՝ ասաց նա: Որովհետև երեկ նրանք ամբողջ խմբով, ինչպես նախկինում, գնացել էին կինոբար, ուր նայել էին «Լուսիան և սեքսը» ֆիլմը, հետո միասին՝ Ռոբերտոյի, Իվանի, Կլոդի, Արամի, Զինադինի և Լուշի հետ, խմբովի արշավեցին գետափնյա պողոտայով, ինչպես երբեմնի, և ժամանակ առ ժամանակ, դիտավորյալ բարձրաձայն քրքջալով, մտան այս ու այն սրճարանը, որոնցից մեկում Լուսելիա անունով մատուցողուհին,- անունը գրված էր կրծքին,- ցածր խոնարհվեց՝ Խորխեի քթի առաջ դնելով շքեղ, սակայն բացարձակապես անհամ կարկանդակը:

- Այո, գեղեցիկ անուն է,- համաձայնվեց Պալոման՝ ընդհատելով Խորխեի քաղցր հիշողությունները, և սկսեց գրել թղթի վրա՝ ժամանակ առ ժամանակ կրծելով գրիչի փակիչը. գրում էր այն մասին, թե ոնց էր բերում պերգամենտով փաթաթած կարկանդակը, այն մասին, թե որքան հաճախ էր մենակ քնում, քանի դեռ Խորխեն նայում էր իր ֆուտբոլը կամ զբոսնում ընկերների հետ, գրում էր իրար ետևից այն ամենը, ինչ եղել է իրենց հետ:

Եվ ասես զգալով դա, Խորխեն մի պահ անջատվեց հեռուստաէկրանից, որպեսզի համբուրի Պալոմայի այտը և բարի գիշեր ցանկանա:

- Օ, դու կարծես ինչ-որ բա՞ն ես գրում,- ասաց նա՝ նկատելով կնոջ հապշտապ թաքցրած էջը:

- Այո,- ամաչելով պատասխանեց Պալոման:

- Նամակ մայրիկի՞ն:

- Ուրիշ բան:

- Կարդա՞մ,- ձեռքը պարզեց Խորխեն:

- Ոչ,- ձեռնափերով իր վեպի գրերը ծածկեց Պալոման,- դու կծիծաղես:

- Խոստանում եմ, որ չեմ ծիծաղի: Թեև արդեն ծիծաղս գալիս է, որ դու վեպ ես գրում, այլ ոչ կարկանդակ թխում:

- Ստիպված ես լինելու ինքդ թխել այսուհետ,- տարօրինակ ժպիտը ձեռնափով ծածկեց Պալոման:

Չիմանալով ինչ ասել՝ Խորխեն շարունակեց դիտել ֆուտբոլը: Իսկ Պալոման դեռ մի քիչ էլ գրեց, այնուհետև պահեց թուղթը կիսաթափանցիկ թղթապանակի մեջ, ուր պահում էր մոր և տատիկի նամակները, օրացույցեր, թատերական տեղեկատուներ, աֆիշներ ու էլի Աստված գիտի ինչ: Քնելու ժամանակն էր: Իսկ քնելուց առաջ դեռ պետք էր որոշել՝ ո՞ր կարկանդակը թխել վաղը, խնձորի, թե՞ նարնջի, էլի ինչ էր պետք դրա համար խանութից գնել: Եվ այդ մտքերն ապրում էին վեպի մասին մտքերից առանձին, չհանդիպելով և չազդելով միմյանց վրա:

***

Այսպիսին էին Գաբրիելի նոր վեպի առաջին էջի վերջին բառերը, վեպի, որը Գաբրիելը, չդիմանալով տարօրինակ միայնությանը, սկսել էր գրել: Կարդալով այդ բառերը՝ նա, համարյա երջանկությանը նմանվող անբացատրելի բավարարությամբ լցված, հանգցրեց համակարգիչի թրթռացող էկրանը և գնաց գրկելու իր Լուսիտային: Նախկին ֆուտբոլիստ Խորխեի և ապագա արձակագրուհի Պալոմայի սիրո մասին վեպը, ըստ Գաբրիելի մտահղացման, չպետք է նմանվեր իր նախորդ ստեղծագործություններին, այն ոչ միայն պիտի ստացվեր, այլ պիտի ստացվեր անկախ ու կատարյալ: Եվ «Ռեալի» ու «Բարսելոնի» կամ Խորխեի և Պալոմայի ոչ մի դերբի չէին կարողանալու խանգարել նրան այս գործում, գուցե՝ մի թեթև միայն:

Թարգմ. Գ. Խանջյանի

Մարիամ Եփրեմյան

Հիպնոսը քնել է:
Իսկ երբ նա քնեց, էլ ոչ ոք չի քնի:
Արդեն քանի դար նա աչք չէր փակել:
Քունը հոգնել էր եւ իր պատրաստած
հեղուկը
հանկարծ փորձել ցանկացավ:
Ասփոդելներից ծորող հյութը
ծանրացավ նրա կոպերին:
Եւ Քունը քնեց:
Որտեղ է հիմա, ո՞ր քարանձավում:
Իրենց աչքերը տեղի-անտեղի
փակելը նույնիսկ
ներել են նրան դիցերը բոլոր:
Քուն, դադար չունեն. նրան են փնտրում:
Ներել է նրան հայրն
աստվածների հելլեների
հաղթանակն Իլիոնի պարիսպների տակ:
Միայն Դեմետրան չի փնտրում նրան:
Հիմա ձմեռ է:
Իսկ Աքերոնից ու Ստիքսից այն կողմ
ասփոդելներ են ծաղկում...
Քնաբեր հեղուկ պատրաստող չկա:
Հիպնոսը քնել է:
Իսկ երբ նա քնեց, էլ ոչ ոք չի քնի:

***

Գեղեցիկ է Թանատոսը:
Ուսերին իջնող սեւ վարսերով,
մահաբույր թեւերով...
Նա իր խոշոր, օպսիդիանի
պես փայլող աչքերը
հառում է Ընտրյալին ու
մի փունջ մազ է կտրում
նրա գլխից. մահվան համբույր:
Եւ ամեն ինչ մոռացվում է:
Եւ հիշվում է ամենն ինչ մոռացված էր
մինչեւ հիշելը՝ մինչեւ մոռանալը:
Եւ ձգվում է հիշելու եւ
մոռանալու այդ շարքը
մինչեւ Աքերոն, մինչեւ նավակը Քարոնի:
Եւ շարքն այդ նոր կերպարանք է ստանում,
դառնում արթնացում:
Եւ արդեն էլ չես հիշում-մոռանում,
այլ արթնանում ես:
Եւ դու էլ դու չես, եւ ոչ էլ ընտրյալ:
Ընտրյալն ուներ մարմին,
եւ աչքեր ուներ. մահվան աչքերին
հանդիպող աչքեր, եւ մազեր ուներ,
որոնք նվիրեց մահ-Թանատոսին:
Ո՞վ ես ուրեմն: Ստվեր... Ասփոդելակիր:

Մարիամ Կարապետյան

Երեկո

Երբ ստվերիս ինչ-որ բան պատահի,
կիմանամ, որ ինչ-որ բան եմ կորցրել,
և որ աշխարհը արդեն ստվերների ձևով եմ
ընկալում:
Բայց ես համառորեն
մինչև վերջ չեմ հավատում ստվերներին,
որ ամեն տեղ հանդիպում են,
համառորեն հրաշքների էլ չեմ հավատում,
չնայած գիտեմ, որ դրանք կան,
համառորեն հետաձգում եմ քայլելը:
Երևի նույնն եմ,
այն օրերի նման
և այն մարդկանց նման,
ովքեր անշեղորեն գնացին,
բայց չարժանացան տեսնելուն
կամ շեղվեցին կես ճամփից
ու չմտան Երկիրը:
Սովորական բարձրության գլուխներ ենք:
Իսկ նրանք,
որոնց վրա խաղաղություն իջավ
դանդաղեցված,
ճերմակ,
ինչ-որ բանի նման թեթև,
երկար ժամանակ այդպես թեքված մնացին
նազանքով:
Հետո կատարվեցին բոլոր մյուս բաները...

Երեկոյան ես սիրում եմ իմ սենյակի ստվերները՝
սպիտակ ու դեղնավուն շորերով,
մինչև ուշ գիշեր արթուն,
ամենաանորոշ շոշափելիքներով,
որ ուղղահայաց վայրընթացներ
ու վերընթացներ են
աչքերը փակելուց անմիջապես հետո...
Մոտենում է այն ժամը,
որը ես հատկապես շատ եմ սիրում:
Քնելիս գլուխս դնում եմ պրոցեսորի կողքին
և վերջին անգամ մտածում եմ,
թե ով կասի վերջին ցտեսությունը,
ե՞ս, թե՞ նա:
Մարդիկ, որ աշխարհի սկզբից
իրար հետ պիտի լինեին,
հիմա կարող են լինել իրար հետ,
մարդիկ, որոնք մենակ են մնում վերջում:
Այդ ժամին հանգչում են
առանց այդ էլ քնած գլուխները,
և կարելի է քնած-քնած լռել:
Մազերը ճերմակում են, ու ցավում է:
Բեռնատարների ձայնից բարձր
լսվում է մարդկանց հազը,
երկիրը կորցրած մարդիկ մեռնում են,
ինչպես Մովսեսը,
և սա պարզապես արև է,
ոսկի թվացող ստվերներ են,
որոնց վրա արևն է...

***

Եթե հիմա ջուր թափվի վրաս,
թվում է՝ կաճեմ:
Դուգլաս Դուն

Իմ հորինովի բուսական անցյալից,
որ չգիտես ինչու՝ հենց նոր անցավ մտքովս,
պետք է որ ինչ-որ հուշեր ելնեն:
Ուզում եմ հին բաների մասին մտածել:
Օդի այն քանակությունը,
որ անհրաժեշտ էր նվազագույն ներշնչումի համար,
և քնի շարունակությունը՝ առավոտն այգում:
Արևը ստիպում էր, որ իրեն գրկես:
Քամին քո մեջ մտնելու համար էր
(Դա ուղիղ արմատի վրա աճող,
ուղղությունից թեքվող մի բան է,
ինչպես ոտքերի վրա աճող, պարող մեջք):
Ծաղիկները լցնում էին տարածությունը:
Դու սիրում էիր,
և չգիտես ինչու թիթեռներ էին գալիս միտքդ,
երբ պատկերացնում էիր նրանց, ում սիրում էիր:
Դա անցյալի անցյալն էր:
Եվ դու կարող էիր ինչ-որ մեկի արևը լինել,
և կարող էին բարձր ձայներ լինել
(նրանք չէին մտածում, որ երեխաները քնած են),
Դու կարող էիր քո երազանքների մասին խոսել,
քո հին ու ծանոթ երազանքների մասին,
դու կարող էիր սիրել քաղաքի քո բոլոր տները...
Հիմա քաղաքի քրտինքն է,
ու դրանով արդեն չես պրծնի:
Դա անցյալի անցյալն էր:
Եվ ի՞նչ կանեի ես, եթե հիմա լիներ:
Ոտքերը կլվայի՞ արցունքներով
ու մազերով կսրբեի՞:
Հիմա ես ուղղակի գրկում եմ Նրա պատմությունը,
գրկում ու կրծքիս եմ սեղմում:
Դա անցյալի անցյալն էր՝
հեշտ, բաղեղային ոլորում,
հիմա բոլոր ծառերի մասին գրվել է:
Ես երևի կարող եմ ամբողջ
կյանքում պահել այն արևը
ու չվախենալ այն արևից,
ես երևի կարող եմ ամբողջ կյանքում
պահել այն ծառերը
ու չվախենալ այն ծառերից,
ես երևի կարող եմ...
Օրերը կհերիքե՞ն, որ մինչև վերջ ապրենք
բույսից մինչև քաղաք
նորից...

Աշոտ Գաբրիելյան

ԱՂՈԹՔ

Ա

Սրտիցս ձայն տուր շուրթերիս.
Սիրտս համաչափվում է
մոլորակի ու տիեզերքի
կանոնակարգմանը...
Ես, որ քեզ տեսել եմ,
բայց չեմ զգացել,
Ես, որ քեզ զգացել եմ,
բայց չեմ տեսել,
Չլուծված խնդրի հանգույն
անբովանդակ,
Թաքցրած բովանդակ
մի գիտություն՝
Ինձ հանգիստ չես տալիս...
Մարդուց այն կողմ
քո երազն է իմ ուրվականի մեջ,
Քո բանաձևի անհայտ
մասնիկն եմ՝
Խաչակնքված x-ով,
Ինձ գնահատող բազում
տեսությունները
Հաճոյանում են
ինքնահաստատմամբ՝
Ինձ անտեսելով...
Իսկ ես ժամանակ եմ փնտրում
Սրտիս ու տիեզերքի
համաչափության կենտրոնում...

Բ

Քեզ հանիր իմ միջից
Եվ լցրու ունայնությունս ինձանով,
Մարմինս հոգուս թող.
Այն հրաշալի կպահպանի
Երկրային դժոխքից
կնճռոտված նկարագիրս՝
Որպես մեղքիատուցում...

Քեզ հանիր իմ միջից
Եվ ինձ թող իմ էությունը,
Եվ դու կվայելես
Կամքի արարումը,
Եվ կյանքդ հետաքրքիր կլինի...

Գ

Քո էությանը չեմ կասկածել,
Հաստատակամությունդ չի
տարանջատված,
Քո սնափառության
անդրդվելիությունը
Ու սեփական եսիս
սնափառությունը
Միահյուսվում են Քաոսի
արարչատենչությամբ
անգիտակից...
Որոնիր ինձ քո մեջ,
Ես քո մեջ իմ արարումն եմ
արդարացնում,
Բայց այս ընթացքը, որ իմն է,
Քո ունայնությամբ պիտի
արդարանա...

Դ

Չեմ սպառվել,
Եվ անսահմանությունս է,
որ չի թողնում խոսել...
Խոսքը ժամանակ է,
Իսկ էությունս՝
անպարագիծ ընթացք...
Ես ասեղով պիտի կրկտեմ քո
էության մասնիկները
Մինչև սպառեմ Քեզ...
Ես Մարդ եմ՝
Քո ամենատես ոգին...

Ե

Կարող ես ինձ չհավատալ,
Կամքը քոնն է,
Քո կամքը, որ ակամայություն է
հիշեցնում,
Հաստատագրված
ակամայություն...
Քո հաստատագրված
ակամայությամբ
Չես կարող հավատալ ինձ,
Որովհետև իմ աղոթքները
Իմ սնափառությունը մխիթարող
Միակ աղերսներն են,
Որ ապտակ են հայցում
հոգեթափության համար...
Հավատա ինձ՝
Ես քո մեղքն եմ...
Նկատե՞լ ես երեխայի
Արտասվախառն աչքերի
ըմբոստությունը
Արդարության համար...

Զ

Աղոթիր ինձ համար
Ու սիրիր իմ ցավը,
Խլիր ինձանից իմ չարությունը,
Որպեսզի ներեմ քեզ, ո՜վ
Ամենաներող,
Եվ փրկություն հայցիր
քեզ համար,
Ու ես կծնկեմ քո առաջ՝
Փրկությունս քեզ փրկելը
համարելով...
Աղոթիր ինձ համար,
Գուցե ինքդ քեզ գտնես
Իմ հոգու մեջ...

Սարգիս Հովսեփյան

Փակվելուն հինգ էր պակաս, երբ քստքստացնելով ու փորս քորելով մտա մեր թաղի խանութը: Սերժիկը մենակ էր խանութում: Մի հայացքով ընդունեց բարիկունս ու էլի անցավ օրվա հասույթը հաշվելու՝ հավանաբար գերհաճելի գործին: Բայց Սերժիկին մի հայացքն էլ հերիք էր, որ հաստատ գիտակցի նիսյայի տետրի իմ բաժնում նոր տողի ավելանալու անխուսափելիությունը, ուստի բարձր արտասանվող թվերի միջից այնքան արագ, որ հաշիվը հանկարծ չկորցնի, ասեց՝ տետրը դախլի տակ ա: Մինչև ես կողմնորոշվում էի՝ քանի շիշ գարեջուր վերցնեմ, էլի լսվեց Սերժիկի ձայնը. համենայն դեպս ինձ ոչինչ չասող թվերից կոնկրետ մտքի անցումն այնքան արագ եղավ, որ սկզբում ինձ թվաց, թե Սերժիկն ինքն իրեն է խոսում, իսկ Սերժիկն էլ հավանաբար մտածեց, թե չլսելու եմ տալիս, ու մի անգամ էլ ավելի բարձր կրկնեց.

- Քո էջին տեղ չկա, վերջում նոր էջ եմ բացել...

Չորս շիշ գարեջուրը ցուցադրաբար դրեցի ցուցափեղկին, հանեցի տետրն ու թերթելով գտա նոր էջը, որտեղ իմ մի ամսվա պարտքը վերջնահաշվարկ էր արված, իհարկե դեպի վերև կոկիկ կլորացված, իսկ անվանս դիմաց՝ փակագծերի մեջ, գրված էր՝ «ուսանող, 30 տարեկան», փակագծերից դուրս էլ՝ «դաժե ավելի մեծ»: Մտածեցի՝ այ դու սրիկա, ուզում ես ասել, որ անհույս, անհեռանկար մե՞կն եմ, ու լուռ վերցնելով գարեջրի շշերը՝ քայլեցի տուն: Ուր-որ է գալու էր Շուռը:

Արդեն ութ ամիս էր՝ իմ ընկեր Շուռը ինստիտուտից տարկետում էր վերցրել: Մի քանի կոպեկ փող աշխատելու հույսով Տաշքենդում էր՝ քեռու կասկածելի տղու մոտ, ու քանի որ իմ ընկերներից մենակ Շուռն էր կարողանում ինձ հանել խրոնիկական դարձած դեպրեսիայից, լավ օրերի սպասումով մխիթարություն էի փնտրում ֆեյսբուք կոչվող ճահճում: Ամբողջ օրը բանուգործիս անունն էն էր, որ շփվում էի համացանցում տուն-տեղ դրած քաղաքականապես ակտիվ հասարակության հետ, առանց բացառության կարդում էի բոլոր հոդվածներն ու լուրերը, որոնք ինչ-որ կերպ առնչվում էին երկրիս անցյալին, ներկային ու մանավանդ ապագային, բանավիճում կամ կողքից՝ այսպես ասած՝ օֆլայն հետևում էի վեճերին, հատկապես, երբ ինչ-որ հանրահայտ քաղաքական գործիք հերթական անգամ ժեշտի անդուր ձեն էր հանում. ասենք մասը զիջենք ամբողջը պահելու համար, եվրաթուրքերի հետ ամեն գնով հարաբերվենք, կամ էլ թե քսանմեկերորդ դարում մարդս մարդ լինի... Քաղաքականությունը կարգին կտցրել էր ինձ: Բանը հասել էր այնտեղ, որ քաղաքական երազներ էի տեսնում... Հետս խոսել չէր լինում: Նույնիսկ տնեցիների, ծանոթ-բարեկամների հետ վիճում էի քաղաքագիտական եզրույթներով. ասենք՝ մերս հորքուրիս հետ վիճում էր, ասում էի՝ չեք զգում, որ հարս ու տալ ձեր հարցերը պիտի կարգավորեք փոխզիջումների միջոցով՝ հնարավորինս խուսափելով մեկդ մյուսի կենսական շահերի ոլորտ ներթափանցելուց: Կամ հարևանիս ջահել թուլին փողոտ պաշտոն էին տվել, ու էս սրիկան մի այլ կերպ ոգևորվել էր... Տղերքը խնդալով պատմում են, որ գոնե արագ հարցերը լուծեմ, ասել եմ՝ հանկարծ չփորձես խախտել ստատուսքվոն, թե չէ չեմ նայի ոչ բիլակներիդ, ոչ էլ ֆինանսական հնարավորություններիդ, ոտքերդ կջարդեմ...

Մի խոսքով, ծանր էր վրձակս, երբ իմ ընկեր Շուռի ձայնը հեռախոսից ասեց՝ պինդ բռնվի, գալիս եմ: Տնեցիներն արդեն քնած էին, հեռուստացույցը զառանցում էր վերջին լուրերը, և չնայած չէի լսում, բայց ժամանակ առ ժամանակ ականջիս հասնող սահմանային միջադեպ, ադրբեջանական դիվերսիա, համարժեք գործողություններ ու նմանատիպ ուրիշ արտահայտություններ ենթադրել էին տալիս, որ էլի մի քանի մոր հեռախոսազանգով կանչելու են զինկոմիսարիատ ու հայտնելու այն, ինչը հայտնելու համար արժեր, որ պապանձվեր յուրաքանչյուրի լեզուն: Մտածեցի՝ փառքդ շատ, տեր Աստված, եկանք-հասանք տուն, ու անջատեցի հեռուստացույցը: Հենց էդ պահին էլ երգեց բջջայինս: Կանաչ կոճակը սեղմելու հետ նայեցի պատուհանից: Շուռը կանգնած էր պատուհանիս տակ՝ հեռախոսն ականջին.

- Հը՞, ախպերս, չես իջնու՞մ...

- Շուռ ջան, բարձրացի վերև, մինչև մի հատ կոֆե, մի հատ պիվա անես, ես

ü º ð ¶ ² Ü ²

արագ կփոխվեմ, դուրս կգանք...

- Լավ էլի, այ ախպեր, դու էլի փոխված չե՞ս... Լավ, դուռը բաց, գալիս եմ...

Կարոտախեղդ գրկախառնվեցինք, հետո արագ փոխվեցի, Շուռի հետ շնչեցինք գարեջուրն ու սուրճը և դուրս եկանք մայրուղի, որն անցնում էր ուղիղ մեր շենքի տակով: Ուշ ժամ էր, մի-մի սիգարետ վառեցինք ու սկսեցինք տաքսի որսալ, բայց մինչ տաքսի կբռնեինք, Շուռը արագ ներկայացրեց լոկշության դեմ պայքարի իր ծրագիրը, որն այնքան էլ օրիգինալ չէր, բայց էդ պահին միակ հնարավորն էր: Հենց հարցրեցի, թե էսօր ի՞նչ կայֆ ենք ուռելու, Շուռի դեմքին ժպիտ խաղաց: Դա նշանակում էր՝ դու տենց կայֆ կյանքում չես քաշել ու երևի էս գիշեր սատկես: Միայն ասեց, որ պլան չի, զառի չափ կոշտ ա ու Ֆերգանայից ա հետը բերել: Մի վայրկյան իսկ չկասկածեցի Շուռի իմաստալից ժպիտին ու մտածեցի՝ եթե մի գիշեր սենց թե նենց պիտի սատկեմ, թող էդ գիշերն էս լինի, ու չգիտես ինչու, հիշեցի տարիներ առաջ Մոսկվայի կուտուզկեքից մեկում ինձ հանդիպած մի տաջիկի, որն ասում էր՝ բռատ, ռուսների ման լացացնելու համար մեզ զենք պետք չի, մեր զենքը դաշտերում ա աճում, սաղին հագցնելու ենք գեռաինի ու վերջ: էն ժամանակ ծիծաղեցի, բայց էս անգամ մի տեսակ հավատացի տաջիկին:

Շուռը չգիտես ոնց, տաքսու հետևի նստատեղին նստած, հասցրեց նախապատրաստվել, ու երբ մենք, տաքսուց իջնելով, հայտնվեցինք կենտրոնի այգիներից մեկում, մեզ ոչինչ չէր մնում, քան վայելել հեռավոր, արևոտ Ֆերգանայի հովտից մեզ հասած բարիքը: Շուռը կես բերան ասեց՝ էս նենց բոմբ ա, որ կես ծուխն էլ ա սատկացնում, իսկ երբ արդեն մարդա երկուական ծուխ քաշել էինք, Շուռն էլի ինչ-որ բան էր ուզում ավելացնել, բայց այդպես էլ ոչինչ չասեց: Հազիվ հասցրել էինք մեկական սիգարետ վառել, երբ սկսվեց քաոսը. սկզբում թվաց՝ այգու ծառերն ավելի մեծացան, հետո անտանելի քամի բարձրացավ: Հսկայական ծառերն սկսեցին ճոճվել դես ու դեն, բայց միաժամանակ այնպիսի զգացողություն առաջացավ, կարծես մեզ շրջապատող օդն անշարժ է, և քամին այդ չորս-հինգ խորանարդ մետր տարածքի վրա ոչ մի ազդեցություն չունի: Բերանս չորացավ, լեզուս անշարժացավ, իսկ հոտառությունս հիմնավոր կերպով գերի ընկավ պլանի հոտին: Հիշեցի, որ կոշտ սարքելու համար ձիերին վազեցնում են պլանի դաշտում, իսկ հետո քրտնած ձիերի վրայից քերում են քրտինքին միախառնված պլանի շիրեն... Ծառուղիներում չգիտես որտեղից հայտնվեցին սելջուկ ձիավորներ ու անասելի արագությամբ եկան-անցան աչքերիս առջևով: Ձիերի քրտնահոտը միախառնվեց պլանի հոտին... Որձկացի, քիչ մնաց հետ տամ, բայց մի կերպ զսպեցի... Հետո միանգամից շուրջս ամեն ինչ դանդաղեց, սկսեցի զգալ արյունս, որը գնալով ծանրացավ ու թանձրացավ... Վախեցա: Լռությունը դարձավ անտանելի և կարծես հրահանգով, ծայրահեղ դանդաղ, բայց հնարավորինս սինքրոն ես ու Շուռը նայեցինք իրար... Վախ, մամա ջան, էս ի՞՝նչ էր... Կարծես միտքս կարդալով՝ ասում էր Շուռի վախեցած հայացքը: Այնպիսի տեսք ուներ, ասես անսահման խորը անդունդի եզրին կանգնած, միամտաբար նայել էր ներքև, և սահմռկեցուցիչ անսահմանությունը քիչ էր մնացել կուլ տար նրա ծանրացած գլուխը, իսկ ձգողության ուժն էլ կայծակնային արագությամբ սահել էր դեմքի վրայով՝ էլ ավելի լոշտելով առանց այն էլ լոշտ ականջները... Ֆերգանաաաա՜... Միաժամանակ մտածեցինք ես ու Շուռը ու չգիտեմ՝ մանդրաժից, թե զգացողությունների անսպասելի առատությունից՝ ժպտացինք, հետո այնքան դանդաղ, որքան դեպի միմյանց էինք շրջվել, հետ շրջվեցինք և լուռ, որպես նպատակակետ վերցնելով այգու մուտքի մոտ անվերջ թարթող գիշերային լույսը, քայլեցինք առաջ.... կարծես փափուկ գորգի վրայով: Ինձ թվաց՝ ծնկներս անհարկի շատ եմ վեր բարձրացնում և զինվորականի նման տեղում եմ քայլում: Մինչև այգու մուտքը հազիվ մի երկու հարյուր մետր լիներ, սակայն ես ու Շուռը ոչ մի կերպ չէինք կարողանում հաղթահարել այդ մետրերը: Գետնին՝ հեռվից թափանցող լույսի ճառագայթների տակ, փայլփլում էին ապակու կտորտանքներ. երբեմն դրանց փայլն այնքան ուժեղ էր, որ աչք էր ծակում... Գիշերով մայրուղու վրա հեռվից երևացող մեքենայի լույսերի պես փայլերն անշտապ մոտենում էին մեզ, սակայն այնքան դանդաղ, որ անհամբերությունից քիչ էր մնում շունչս կտրվեր...

Հիշողության մասնակի կորուստով ինձ հայտնաբերեցի փափուկ բազմոցին հարմարավետ վեր ընկած, կիսամութի մեջ բարձր երաժշտության ներքո սառը գարեջուր վայելելիս: Չգիտեմ՝ որքան ժամանակ էի անգիտակից վիճակում, և որ պահից սկսեցի ինչ-որ բան հասկանալ, բայց առաջին բանը, որ անցավ մտքովս՝ էս իիի՞՝նչ վատ եմ ես, բա էս իիի՞՝նչ սիրուն տուտուզ ա... Քիչ այն կողմ՝ փոքրիկ բեմահարթակին, մի կիսամերկ գեղեցկուհի արևելյան տակտերի տակ ռիթմիկ շարժում էր հետույքը: Նրա կոնքերը զնգում էին ականջներիս մեջ, լիքը կուրծքն ու ձիգ ազդրերը դողում էին կրքից, իսկ թմբլիկ փորը տաք ու սահուն ալիքվում-գալարվում էր աչքերիս մեջ՝ ստիպելով ուղեղիս ծալքերին հետևել իր օրինակին... Պորտն այնքան խորն էր, որ հայացքս կորչում էր այդ մութ խոռոչում... Գիտակցությանս միակ փշուրը, Սամարղանդի ծուռումուռ փողոցներն ընկած անտեր շան նման հաստատ կանհետանար՝ ինչ-որ անհասկանալի հետք հոտոտելով, եթե.... չընդհատվեր երաժշտությունը:

Շրջվեցի դեպի Շուռն ու գտա նրան սառած ժպիտով ուշադիր ինձ հետևելիս, մի տեսակ գորովալից հայացքով՝ իբր փոքր ախպերս վերջապես էն աշխարհից հետ եկավ...

- Արա, Շուռ, դու հլը պորտապարի հավես էլ ունե՞ս...- ձեռքս բեմահարթակի կողմը պարզելով՝ մի կերպ խոսեցի ես:

- Ախպեր, նախ հեչ էլ պորտապար չէր, նորմալ եվրոպական ժողովրդական մերկապար էր, ուղղակի մի քիչ արևելյան տակտերով... Երկրորդն էլ, չգիտե՞ս՝ սենց հարցերում Շուռը միշտ պիոներ ա...- ավելի լայն ժպտալով՝ պատասխանեց Շուռն ու անմիջապես էլ ավելացրեց,- Համ էլ մոռացե՞լ ես, ախպերս, որ որոշել էինք ֆսսալուց հետո գալ ստեղ... Չնայած դու կարգիիի՜ն վատ էիր... Շվեցարն ա օգնել, որ աստիճաններն իջնես...

Հայացքս փախցնելով կում արեցի բաժակիցս: Նայեցի դատարկ բեմահարթակին, և մինչ փորձում էի հասկանալ, թե ինչպես կարող էի մերկապարի փոխարեն պորտապար տեսնել, լսվեց երաժշտությունը, խաղացին ակումբի լույսերը, ու բեմահարթակին հայտնվեց հերթական գեղեցկուհին: Նա, առանց ժամանակ կորցնելու, սկսեց ոլորվել ձողի վրա: Լավն էր մեռածը: Հաճույքով կկծեի ձախ պտուկը... Եթե իհարկե չալարեի...

- Փող տվե՞լ ես սրան... Հլը մի քիչ փող տուր...

- Կարաս արխային կայֆավատ լինես, ախպերս...- դիմացը դրված կանաչ թղթադրամների մի մասն իմ կողմը հրելով՝ ասեց Շուռը և ինքնագոհ, խորը նստեց բազկաթոռի մեջ:

Վառեցի կրակայրիչն ու, մինչև հարևան սեղաններից իր վաստակը հավաքող պարուհին կմոտենար, մտածեցի, որ մի տեսակ թեստի պես բան եմ անում՝ մերկ գեղեցկուհուն ինձ մոտ կանչելով, այսինքն՝ փորձում եմ հասկանալ, թե դեռ ինչ ազդեցություն ունի Ֆերգանան ինձ վրա. եթե պարուհին իր թեթև հպումներով գայթակղեց այնքան, որ ցանկություն առաջացավ նրա ձիգ տուտուզին անձամբ ֆրանկլինի դիմանկարը նկարելու, ուրեմն կարելի է համարել, որ Միջին Ասիան՝ իր բոլոր հետևանքներով, այլևս ոչ մի ազդեցություն չունի ինձ վրա, իսկ եթե նույնիսկ սրա նման գեղեցկուհին չկարողացավ հանել իմ միջից արևելյան ալարն ու անշտապությունը.... ուրեմն ամեն ինչ կորած է:

Պարուհին շատ չուշացավ: Մինչ ես դուրս կգայի իմ մտորումներից, նրա հետույքն արդեն պտույտներ էր գործում արևելքի ու արևմուտքի ազդեցությունները ճշգրիտ չափող իմ գործիքից ընդամենը միլիմետր հեռավորության վրա՝ երբեմն-երբեմն իբր միամիտ հպվելով դրան, իսկ նրա գեղեցիկ մռութը ժպտում էր ինձ հյուսիսային կտրող քամու պես դեմքս քերծող մազերի միջից, կարծես ասելով՝ հիմա արդեն լա՞վ ես... Դե եթե լավ ես, տեսնենք՝ ինչի՞ ես ընդունակ...

Ի վերջո, հավանաբար իր գերզգայուն հետույքով զգալով, որ անհույս եմ՝ ստացավ կանաչ թղթադրամներն ու մի նախատող հայացք նետելով՝ հեռացավ դեպի ձողը, որը, համենայն դեպս խաղացող ու թարթող գույնզգույն լույսերի տակ ծռմռվելով ու ալիքվելով, թվում էր՝ ավելի հեշտությամբ է տրվում նրա հմայքներին:

Ամեն ինչ պարզ էր. արևելյան ամենազոր ալարն էր տիրում ինձ: Պետք էր որոշել՝ կամ ձեռք եմ քաշում ֆերգանայից՝ այդպես թոթափելով լուծը, կամ ինքնամոռաց տրվում եմ նրան, կամ էլ ընտրում եմ ամենադժվարը՝ ֆերգանայի ազդեցության տակ գտնվելով՝ փորձում եմ հնարավորինս պահել ինքնատիրապետումս...

Ես ընտրեցի վերջինը, որովհետև... Որովհետև հիմար բնավորություն ունեմ՝ միշտ գնալ դժվար ճանապարհով... Բայց փոխարենը միշտ ավելի հետաքրքիր է ճանապարհը, քան այն, ինչ մեզ սպասում է վերջում... Վերջը միշտ էլ հայտնի է, իսկ այ ճանապարհը... Ճանապարհ անցնելն իմ արյան մեջ է, ճակատագրի հետ խաղալն իմ առանձնահատ-

»»» էջ 7

Սարգիս Հովսեփյան

«««« էջ 6

կությունն է... Խաղալն իմ առանձնահատկությունն է, և ոչինչ չի կարող ինձ հետ պահելել խաղալուց... Ոչ մի հաշվարկ, ոչ մի տրամաբանություն, ոչ մի վիճակագրություն... Առաջ ախպերս... Խաղալ, խաղալ մինչև վերջ... Մինչև այլևս խաղալու բան չի լինի, բայց կլինի արկածներով հարուստ կենսագրություն, իսկ մնացած բոլորին միշտ էլ կհասցնեմ միանալ... Ու՞ր պիտի հասնեն՝ առանց ազարտի հմայքը զգալու... Էլի նույն, վաղուց հայտնի վերջի՞ն... է, սենց թե նենց, բոլորս էլ նույն տեղում ենք հանդիպելու...

Զգացի, որ շատ եմ խորացել, ու մի տեսակ ամաչելով՝ Շուռին հարցրեցի.

- Ախպեր, Շուռ ջան, մի բան հարցնեմ... Ինչքա՞ն ժամանակ ա պետք էս ֆերգանայի կայֆը քաշել, որ կարողանաս էդ կայֆի տակ քեզ տիրապետել ու ամեն ինչ կանտրոլի տակ պահել... Խոսքի չանջատվես կամ վախից քեզ չկորցնես... Ու ինչքան էլ վախենալու լինի, կայֆ բռնես...

- Եսի՞մ, ախպեր, նայած մարդ... Ես արդեն մի քսան անգամ արել եմ էս կայֆից, բայց էլի մոմենտ ա գալիս՝ անջատում ա... Ախպեր, էս կայֆի հետաքրքիրը գիտե՞ս որն ա... Որ ինչքան էլ քաշում ես, չես սովորում: Ամեն անգամ քեզ թվում ա, որ վերջ, արդեն հազար անգամ արել եմ, գիտեմ, արդեն հազար անգամ սատկացրել ա, ճանաչում եմ էս կայֆը, բայց ամեն անգամ ինքը լրիվ նոր ձևի, ավելի թափով ա բացում, ավելի դաժան ու անսպասելի ա մորթում քեզ... Մի խոսքով, էս Լենկ Թեմուրի կայֆերից ա, ախպեր, սրա մասշտաբներն ուրիշ են, սրա հետ պիտի զգույշ լինես...

- Հա, բայց ասու՞մ ես՝ նայած մարդ... Նշանակում ա, մարդ կա, որ կարա կանտրոլ անի էս կայֆը, չէ՞...

- Հա, ախպեր, մարդ կա, բայց էդ մարդը ես ու դու չենք... էդ մարդը ուզբեկն ա...

- Ինչի՞...

- Որովհետև էդ իրա կայֆն ա...

- Հա ի՞նչ անենք...

- Ո՞նց ինչ անենք... Ախպեր, ինքը վռազելու տեղ չունի, հասկանու՞մ ես... Մեր նման՝ ամեն ինչ հիմա ու շատ... Ինքն իրան կարա թույլ տա մի հատ յուրտում կոշտը մշրի օջախի մլմլացող պեծերի վրա ու պատդիմ, կայֆի տակ լռվի օրերով, դու կարա՞ս... Չես կարա, որովհետև հազար գործ ունես, անընդհատ վռազում ես, անընդհատ ժամանակդ չի հերիքում... Իրան մաքսիմում կողքի հարևանի ապրածն ա հետաքրքրում, իսկ դու, հերիք չի՝ գիտես Լազուրնի բերեգ մարդիկ ոնց են ապրում, հլը մի բան էլ ուզում ես դմփցնել ընդեղի բոլոր ծտերին, քանի ջահել ես... Ինքը կարա տասը երեխա ունենանա ու տասը վայրկյան չմտածի, թե էդ երեխեքն ի՞նչ են լինելու, մենակ վերջում ասի՝ Ալլահը մեծ ա, իսկ դու ասում ես՝ Աստված մեծ ա, բայց մտածում ես՝ արժե՞ մի երեխա ունենալ, եթե էդ մի երեխեն Օքսֆորդ չի սովորելու, ավարտելուց հետո էլ էյջ-էս-Բի-Սի բանկի կառավարիչը չի դառնալու... Մի խոսքով, ախպերս, որպես ապագա պատմաբան եմ ասում. էս պատմականորեն իրա կայֆն ա, ու սրա հետ պետք ա զգույշ լինել...

- Դե լավ, հա, այ պատմաբան, հիմա ի՞նչ ես ասում, չքաշե՞նք էդ կայֆից...

- Քաշի, ախպեր, ո՞վ ա քեզ բան ասում... Դու էս խորացել, ուզում ես ինքնատիրապետումդ չկորցնել... Գիտե՞ս քո նման քանի հոգի են մնացել էս կայֆի տակ... Դու ինձանից լավ գիտես, որ ամեն կայֆ էլ կարելի ա անել, եթե էդ կայֆին համապատասխան ռռ ունես, ու եթե էդ կայֆի տակ արժանապատվությունդ չես կորցնելու... Ես մենակ էդ եմ ասում, ուրիշ բան չեմ ասում... Ու մեկ էլ, որ չարժե հույս ունենալ, թե չուժոյ կայֆը կարելի ա մինչև վերջ կանտրոլ անել, էդքան բան... Տես, էս կայֆը ես եմ բերել, չէ՞, բայց իմ ախպերական խորհուրդը լսի. եթե ուզում ես մինչև վերջ տրեզվի մնալ, ավելի լավ ա ընդհանրապես մի արա, որովհետև էս սուպերմարկետից առած եվրաստանդարտ մթերք չի, որ վրեն կալորիաները կարդաս ու հաշվես, էս վայրենի կայֆ ա... Թե չէ խորացել ես, համ ուզում ես կայֆավատ լինել, համ էլ ուզում ես կույս մնալ, տենց չի լինում, ախպեր, էս էն կայֆերից ա, որ էսքան ցույց ա տալիս, բայց աաա՜յ էսքան կոխում ա...- սկզբում մատի ծայրը, այնուհետև մինչև արմունկը ցույց տվեց Շուռը, հետո կարծես իրեն մեղավոր զգալով՝ ավելացրեց,- Ներող, ախպերս, մի քիչ կոպիտ եմ ասում, բայց դե էլ ուրիշ ձև չկա... Իմ արև, կայֆս էլ լրիվ թողեց, էնքան խոսացի... Ավելի լավ ա, արի հելնենք, մի հատ էլ ֆսսանք, մեկ ա աչքիս էս ծտերը քեզ բան չեն ասում...- վերջին բառերը Շուռն ասեց մի տեսակ ծաղրով,

ու առանց պատասխանի սպասելու՝ ելավ տեղից:

- Շուռ, հավատա՝ ոչ մի ծիտ աչքիս չի երևում, էս ֆերգանայի տակ նենց եմ ալարում, իմ արև... Համ էլ, գիտես, ես սիրում եմ տարբեր կայֆերի ազդեցություններն ուսումնասիրել...

- Կայֆերը կայֆավատ լինելու համար են, ոչ թե ուսումնասիրելու, իմ հետաքրքրասեր ախպեր... Հել, արի...

Չեմ կարող ասել, թե ակումբի զուգարանից մինչև մեր սեղանը վերադառնալն այս անգամ որքան տևեց, որովհետև, անկեղծ ասած, չգիտեմ, բայց դեռ նոր էինք նստել փափուկ բազմոցներին, երբ մոտեցան ու ասեցին, որ ակումբը փակվում է: Շուռը մի տեսակ կասկածանքով նայեց մատուցողին, իսկ հետո, խորը ափսոսանք արտահայտող հայացքով հարցրեց՝ բա մարդիկ նստա՞ծ են, բայց նրան պատասխանեցին, թե իբր բոլորն էլ զգուշացված են: Մի խոսքով քիչ անց ես ու Շուռը հայտնվեցինք գիշերային դատարկությունից զրնգացող փողոցում ու մինչ կգիտակցեինք՝ ուր ենք ու ինչ պիտի անենք, տոնածառի պես լուսավորված վիլիսատիպ մի փլատակ աղմուկով կայանեց ուղիղ մեր դիմաց: Ես, չգիտես ինչու, իսկույն մտածեցի, որ վերջ, ֆերգանաա՜... Իսկ Շուռը նույնիսկ բարձրաձայն պատասխանեց՝ ֆերգանա ասիր ու պրծա՞ր, ախպեր... Համազգեստավորներից մեկն ուշադիր իմ ու Շուռի դեմքերին նայելով ասեց՝ էս աչքիս լավ էլ կայֆ եք, հը՞...էդ ո՞վ ա ձեզ տենց սատկացրել... Ես էլ ոչ էս կողմ, ոչ էն կողմ, թե՝ ուզբեկ էլեկտրիկ ա, չես ճանաչի... Շուռը փռթկաց, ես հետևեցի նրան, ու երկուսով սկսեցինք անզուսպ կչկչալ: Կատաղած համազգեստավորն էլ թե՝ դու հլը մեր մոջախեդ օպեռներին չես ճանաչում, հեսա հասնենք տեղ, տես սատկացնելը որն ա, ու մյուս ընկերոջ հետ մեզ հրեցին մեքենայի հետնամասը: Մեքենան շարժվեց: Մաքուր օդի փոքրիկ չափաբաժինը, որ ես ու Շուռը հասցրեցինք շնչել փողոցում, հետո էլ իմ սևեռվելու հակվածությունը միշտ խթանող խավարը, որ տիրում էր խցիկում, կարծես նպաստեցին, որ հեռավոր, զգացական շերտերում, մի անդուր, ոչ այն է միտք, ոչ այն է կիսամիտք-կիսակասկած-կիսազգացողություն ծնվի... «Էս պաստավկա արի՞ն...» հարցը այն է այն է ուզում էր սպրդել գիտակցական շերտ, և ես նույնիսկ շրջվեցի իմ ընկեր Շուռի կողմը, որպեսզի հարցնեմ, թե ինքն էլ զգա՞ց, որ մի տեսակ շատ արագ հայտնվեցին էս... Բայց մեր կայֆը ֆերգանա չէր լինի, եթե բոլոր շերտերը վայրկյանների ընթացքում իր հսկողության տակ չառներ: Մի քանի անհույս փորձ արեցի՝ բռնելու մտքիս ծայրը, բայց ավելի խճճվեցի, իսկ վայրկյան անց գիտակցությունս խաղաղվեց, ևս մի ակնթարթ հետո արդեն բոլորովին նոր միտք էր զբաղեցնում բորբոքված ուղեղս: Երևի այն պատճառով, որ ուշադրությունս հիմա էլ սևեռվել էր հատակի վրա՝ գարեջրի խցանի չափ մի կետի: Տարօրինակ կետի մեջ մեծ արագությամբ ինչ-որ բան էր շարժվում: Երկար, կենտրոնացած սկսեցի նայել անհասկանալի կետին: Հոսող զանգվածը գնալով ավելի ու ավելի էր արագանում, իսկ երբ ժամանակ առ ժամանակ փողոցից լույս էր ընկնում մեքենայի մեջ, պարզ երևում էր, որ հոսող զանգվածը միատարր չէ և կազմված է անհամար առանձին մասնիկներից: Ավելի լարեցի ուշադրությունս: Առանձին մասնիկներն սկսեցին որոշակիանալ ու մի գիշերվա մեջ արդեն երկրորդ անգամ կարծես ուղղաթիռից տեսա նրանց... Սելջուկ ձիավորներին, որոնց անվերջանալի հորդաները խիտ շարքերով, սրերը մերկացրած գետի պես հոսում էին մեր ընթացքին հակառակ... Ձիերի քրտնահոտից էլի որձկացի... Ո՞վքեր էին... Ու՞ր էին շտապում այդպես ռազմատենչ... Փակեցի աչքերս, բայց ձիավորները շարունակում էին վարգել կոպերիս տակ: Հազարավոր սմբակների ձայները՝ միախառնված վայրենի աղաղակներին, շարունակում էին հնչել ականջներիս մեջ, և այդ ամենից գլուխս անտանելի պտտվում էր... Կարծես օդում լինեի: Փակ աչքերով ձեռքերս տարածեցի աջ ու ձախ՝ փորձելով բռնվելու տեղ գտնել, և անկախ իմ կամքից՝ բռնեցի Շուռի թևը... Շուռը, որ մինչ այդ լուռ էր, հանկարծ ասեց՝ վերջ ախպեր, կռիվը սկսվեց... Ոչ մի կերպ չցանկանալով կտրվել ինձ այնքան գերած տեսարանից, բայց կարծես պարտականություն զգալով Շուռի նկատմամբ, դժվարությամբ բացեցի աչքերս և կիսամութի մեջ համարյա բան չտեսնելով, որքան հնարավոր էր արագ նայեցի Շուռին ու կրկին հետ շրջվեցի: Երկար փնտրեցի արտասովոր անցքը: Երբ վերջապես գտա, պարզվեց՝ մի սովորական անցք է հատակին: Սակայն չէի էլ հասցրել ափսոսալ, երբ նկատեցի, որ անցքի մեջ երևացող ճանապարհը ոչ թե ասֆալտապատ է, ինչպես պիտի լիներ քաղաքում, այլ քարքարոտ է մեր դիրքեր տանող ճանապարհի նման... Հիշեցի Շուռի բառերը... Կռիվը սկսվեց, ախպեր, կրկնեցի ես ու վստահ, որ դիրքերի ճանապարհին ենք, ձեռքս տարա գրպանս, որպեսզի սիգարետ հանեմ... Հանկարծ մտքովս անցավ, որ մեքենան լիքն է պայթյուցիկ-մայթուցիկներով... Փոշմանած ձեռքս հանեցի գրպանիցս ու առաջին անգամ դիրքեր բարձրացող նորակոչիկի նման, հուզմունքս թաքցնելու համար ուրիշ հարմար բան չգտնելով, երգեցի.

- Անօրեն թուրքն է տիրել մայր հողին... Ի՞նչ սրտով պիտի մտնենք անկողին... Մամ ջան, չտխրես, շատ չմտածես... Կռիվ ենք գնում ախպերս ու ես...

Շուռը զարմացած նայեց ինձ... Հետո միասին երգեցինք.

- Մռայլ գիշերն է, նստած ենք փոսում... Այստեղ հայ քաջի արյունն է հոսում... Եկել ենք կռիվ, կռվում ենք այսպես... Խփում ենք թուրքին ախպերս ու ես...

Երբ դադարեցինք, առաջին անգամ մտածեցի, որ տնեցիներին հրաժեշտ չեմ տվել...

- Հորս խանչալն իզուր չվերցրեցի...

- Լավ ա չասիր՝ պապուս կարաբինը... էս ո՞ր թիվն ա, այ ախպեր...

- Չէ, Շուռ, հորս խանչալը ափսոս չվերցրեցի... Հորս հին, հազար տարվա խանչալը...

- Ինչի՞դ ա պետք հորդ խանչալը... Կարո՞ղ ա լավ չես, ախպերս...

- Լավ եմ Շուռ... Ուղղակի... Կարող ա, մեկ էլ տեսար... էլ...- փաթաթվեցի իմ ընկեր Շուռին ու սկսեցի հեկեկալ:

- Ախպեր, դու ո՞ր կինոյից ես... Ի՞նչ եղավ քեզ...- ապշած իմ վերջին արարքից հարցրեց Շուռը:

- Բա ո՞նց եղավ, Շուռ... Ո՞նց եղավ, որ դրանք էդքան մոտիկացան...

Շուռը, կարծես չըմբռնելով հարցս, ի պատասխան հարցրեց.

- Ո՞վ, ախպեր, ի՞նչին մոտիկացան...

- Թուրքերը, ախպեր, ո՞նց հասան էրևանի մոտ...

Շուռը լռեց՝ երևի փորձելով մարսել լսածը, բայց ես մի տեսակ խեղճացած շարունակեցի՝ առանց Շուռին ուշադրություն դարձնելու.

- Շուռ, ամեն դեպքում կասկեդ դիր, ախպերս... Մենք հլը Լազուրնի բերեգ կայֆավատ չենք եղել...

- Հա՞ որ... Դե դու էլ դիր, ախպերս... Մեր երեխեքը հլը Օքսֆորդ չեն սովորել...

Հետո լռեցինք... Կրկին երևացին սելջուկ ձիավորները... Հետո երևացին թուրքերը, հետո թուրք-սելջուկները... Անտանելի աղմուկ-աղաղակ բարձրացավ, վայնասուն... Կույս աղջիկները սկսեցին նետվել Մաշտոցի պողոտայի վրա կախված իրենց պատշգամբներից... Տենդագին հայացքով խառնաշփոթի մեջ սկսեցի փնտրել որևէ մեկին, ով կխելագարվեր աչքերիս առաջ, բայց չգտա... Մի քանի հանրաճանաչ դեմքեր, թիկնապահներով շրջապատված, հին բարեկամի ինքնավստահ կեցվածքով փորձեցին կանգնեցնել հորդաների ընթացքը, բայց ջարդուփշուր եղան սմբակների տակ... Քրտնահոտին միախառնված արյան հոտը տարածվեց ամենուր... Հետո ինձ ու իմ ընկեր Շուռին ուրիշ բան չէր մնում, քան լիցքավորել մեր զենքերը... Հետո Աստծուց խնդրեցի, որ ինձ օգնի չվախենալ, ու երբ բացվեց մեքենայի դուռը, հավաքեցի ողջ համարձակությունս, անջատեցի հոգնած ուղեղս ու նետվեցի դուրս, գոչելով.

- Առաաա՜ջ, մարտի... Հանուն...

Ջրհեղեղ՝ ժամանակային անանցանելիություն

ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

Համաշխարհային մեծ ջրհեղեղի մասին հիշատակություններ ունեն բազմաթիվ ժողովուրդներ, վկայությունների հիմքը տարաբնույթ է՝ սկսած ամենավաղ պահպանված բաբելոնական, շումեր-աքադական արձանագրություններից, խալդական Բերուսի պատմությունից (ի դեպ, այս տարբերակն առավել հին է, քան աստվածաշնչյան Ծննդոցի պատմությունը և առաջին անգամ Արմենիա երկրի անվանումը հիշատակվում է հենց այստեղ), մինչ հնդկական Վիշնու աստծու մասին վկայություններ ու Գիլգամեշի առասպել: Սակայն հստակորեն կարելի է ասել, որ մեր հոգևոր հարազատությունը ջրհեղեղյան թեմայի հետ անմիջապես կապված է հենց աստվածաշնչյան վկայության՝ տապանի Արարատ լեռան գագաթին հանգրվանելու փաստի հետ: Ինչպես երևում է առասպելի աշխարհագրական ընդգրկունությունից՝ համաշխարհային ջրհեղեղի թեման տարածված է տարբեր ազգերի մոտ, համաշխարհային մշակույթի պատմության մեջ բազմաթիվ «ջրհեղեղային» արծարծումներ կան՝ գեղանկարչություն, կինեմատոգրաֆիա, գրականություն:

Ջրհեղեղի, տապանի ու փրկության մեկնաբանությունները ամենատարբեր գեղարվեստական մտահղացումների ու փոխաբերությունների հիմք են ծառայել՝ ամենատարաբնույթ այլաբանական զուգահեռումներից, մինչև իրավիճակային ընկալման նմանություն:

Ամբողջովին այլաբանական պատկեր է Հակոբ Մովսեսի «Թռչունների երկինք» ժողովածուի բանաստեղծությունների ջրհեղեղային արտածումը. կյանքի ընթացքն ինքնին մի ջրհեղեղ- փորձություն է, որը երկու մասերի է բաժանում կյանքի երկրային ու երկնային ժամանակահատվածները:

Ցնծությու՞ն է հիմա.
ջրերն իջան արդեն:
Օ, Ինչ երկար տևեց
ջրհեղեղը:
Բայց մենք այստեղ մարմին հագած սպասեցինք հլու:[1]

Համանման մի զուգահեռում՝ կյանքը-ջրհեղեղ, հանդիպում ենք և Հրաչյա Թամրազյանի բանաստեղծության մեջ. (պատկերն այստեղ այլաբանական է, սակայն Թամրազյանի պոեզիայում դարավերջյան ապոկալիպտիկ սիմվոլների հետ՝ Դեղին Մոլոք, Նեռ, ներկա է նաև Նոյը): Մեր մարմինն այն փրկօղակ-տապանն է, որ օրերի միջով դեպի փրկության պիտի տանի մեր սիրտն ու հոգին:

Ինչ ջրհեղեղ է այսպես անգո,
ոչ սկիզբ ունի և ոչ էլ վերջ:
-Ճոճվում է սիրտը՝ տապանը քո,
այս անծայրարիր ջրերի մեջ:[2]

Խնդիրն այսքան լայն հարթությամբ վերցնելով հանդերձ՝ թեմայի դիտարկումը ընդգծված պատմաժամանակային արժեք է ձեռք բերում միայն հետանկախության շրջանի գրականության մեջ՝ որպես ժամանակաշրջանը բնորոշող «մարդկության ժամանակակից գոյաբանություն» (ինչպես սահմանում է Սեյրան Գրիգորյանը): Շարունակելով իր միտքը՝ «Հայաստանի պոեզիան անկախության շրջանում» հոդվածում Գրիգորյանը գրում է. «Պատկերը դառնում է համապարփակ բանաձևում և փոխանցվում ամբողջ բանաստեղծական շարժմանը: ...Կարելի է վստահաբար ասել, որ Նոյի ու ջրհեղեղի պատկերը Հայաստանի արդի բանաստեղծության ամենից բնութագրական փոխաբերությունն է»:[3]

Ջրհեղեղային բոլոր առասպելապատումների մեջ աշխարհը գտնվում է բնական, նախանշված ճանապարհից դուրս քաոսային իրավիճակում, և հենց այդ քաոսայնությունն է դրդում Արարչին նախաձեռնել հիմնարար մի փոփոխություն՝ հնի կործանում և մաքրագործող ջրի օգնությամբ նորի հաստատում: Հետանկախության ժամանակաշրջանը՝ 1990 թ. նախաշեմը, տարերային ընթացք ուներ. փոխվել էր հասարակարգը, փոխվել էր կյանքի ընթացքը. երկրաշարժը (հետաքրքրական է, որ առավել փաստացի, իրական տարերային այս աղետը՝1988-ի երկրաշարժը, գեղարվեստական ընդգրկման այն ուժը չունի, որքան միֆական կառույց ջրհեղեղը), շրջափակումը, մութ ու ցուրտ տարիները, արցախյան պատերազմը կյանքի ընկալման մի ձևաչափ էին ստեղծել, որի ելքն անզեն աչքով անտեսանելի էր: Փրկությունը կտրուկ, հիմնովին գործողության մեջ էր, որն էլ հենց կարող էր ջրհեղեղը լինել: Միֆը սկսեց գործել, այս անգամ ջրհեղեղը ձեռնարկվեց ոչ թե Աստծո կողմից, այլ՝ գրող-մտավորականի: Գրողն արարիչի նախաձեռնություն է վերցնում իր ուսերին՝ իր ակնհայտ անզորությունը արարչական անզորության տակ թաքցնելով:

Խոսելով միֆերի կրկնվող էության մասին՝ Ժենյա Քալանթարյանը գրում է. «Ջրհեղեղն ու Նոյի տապանը միֆական կառույց է (ստրուկտուրա), որը բովանդակավորվում է յուրաքանչյուր ժամանակին համապատասխան»[4]:

Տվյալ պարագայում այդ ստրուկտուրան ստանում է1990-ականների սոցիալ-տնտեսական, հասարաքաղաքական ու պատմական հարաբերությունների թելադրած բարոյական ու գեղագիտական փոփոխությունների բովանդակությունը, իսկ ամբողջ երևույթն ինքնին դառնում է ժամանակային խնդիր, ըստ էության նա հնի ու նորի, մտածողական տարբեր համակարգերի պայքար:

Հովհաննես Գրիգորյան՝ «Երկու ջրհեղեղի արանքում» (1996), Արտեմ Հարությունյան՝ «Նամակ Նոյին» (1996),Ղուկաս Սիրունյան՝ «Տապանի վրա» (1996), ջրային թեմայի շարունակություն՝ Վառլեն Ալեքսանյան՝ «Մինչև վերջին անձրևը» (2007), Նորայր Գրիգորյան՝ «Տեղատարափ անձրևների ժամանակաշրջան» (2005) ժողովածուները ջրհեղեղային թեմայի տիպիկ հետանկախության ու դարավերջյան սոցիալ-տնտեսական, հասարաքաղաքական զարգացումների արգասիք են:

Հովհ. Գրիգորյանի «Երկու ջրհեղեղի արանքում» ժողովածուում ժամանակային անանցումայնությունն առավելապես սոցիալական ու հասարակական կյանքով է պայմանավորված. «Ծնվել եմ Նավթավառի համաստեղության տակ»,-գրում է Գրիգորյանը՝ խաղարկելով ասելիքի սոցիալական ենթատեքստը, իսկ հաջորդ պահին առավել կոնկրետ սոցիալական երևույթների թվարկումը՝ «ինձ ո՞վ կթողնի Պառնաս՝ նավթի բիդոններով, հացի կտրոններով» ժամանակի ու տարածության մեջ տեղակայելով՝ «և ափերիս մեջ նայելով, ուր նավթն ու սոլյարայուղը վաղուց ծածկել *խճողել են* ուղիներս ***անցած ու գալիք***», «մահճակալի մեջ *1993թ հուլիսյան մի սքանչելի առավոտ* ***արթնացել ու մոլորվել էր*** ժամանակակից մի հայ բանաստեղծ»՝ ցույց է տալիս սոցիալական երևույթի հոգեբանական ազդեցությունը՝ ժամանակային մոլորվածությունը, որը շատ բնորոշ է անցումային շրջաններին: «Անցման շրջան»՝ այսպիսի բնորոշում է տալիս ժամանակշրջանին Գրիգորյանը, «Հայտարարված օկուպացիա կամ լճացման տարիներ»՝ սահմանում է Ա. Հարությունյանը՝ «Շրջափակման մրոտ հրեշտակը» վերնագրով շարքի բանաստեղծություններից մեկում:

Վառլեն Ալեքսանյանի ու Նորայր Գրիգորյանի ժողովածուներում արծարծվող նյութը՝ իր մութ ու խավար առօրյայով, ժամանակային ընթացքի իր մոդելով, ամբողջովին տեղակայվում է ջրհեղեղային «գոյաբանության» սահմաններում.

Հոգնած խանութպանները
Նիրհում էին օրվա
դատարկության մեջ
Խանութպանները ապրում էին
իրենց հայտնաբերած
Քերականական չորրորդ ժամանակում.
Ապառնին՝ անհեռանկար,
Ներկան՝ պարտքերի տակ,
Անցյալը՝ կապույտ ու հրաշալի:[5]

Սոցիալական երևույթները վերածնվության ենթարկեցին ոչ միայն մարդկային տեսակն ու հասարակությունը, այլ նաև՝ բնությունը: Ծառի բնության մասնիկ լինելու իմաստը վերափոխվեց սոցիալական խնդրի լուծման գործառույթով: Բնությունը ձևափոխության ենթարկվեց. փողոցները, այգիներն ու անտառները հաջորդ գարնան դատարկ, տափաստանային տարածություն էին հիշեցնում. փոխվեց ստվերի ու լույսի ընկալման դիտանկյունը.

աջ կողմում ծառեր...
որոնք մորթվելու պատրաստ
ոչխարների հեզությամբ
գալիք ձմռանն են սպասում
իսկ մնացած բոլոր կողմերում խավարն է...[6]

Իր ներդաշնակությունը հաստատելու համար բնությունը պետք է պայքարի, ջրհեղեղը բնության տարերքն է: Փոխել ինչ-որ բան «քանի դեռ ձյուն է գալիս և հեռու է անձրևների ժամանակը սահմանված», «քանի դեռ... գոնե մի... եղևնի է մնացել... մեր միակ անտառից...» (սա նախաջրհեղեղյան իրականության ուրվագիծն է, միգուցե դեռ հույս կա փրկելու բնությունը):

Սոցիալական երևույթներին զուգահեռ ջրհեղեղը քաղաքական ենթատեքստ է ստանում առավելապես Արտեմ Հարությունյանի բանաստեղծություններում («Օ՜, դա ջրհեղեղ էր բոլոր ժամանակներից՝ ամենաքաղաքական ու անմարդկայինը»)՝ իր հետ համահավասար տանելով նաև պատմական ժամանակի ու անարդարության վերականգնմանը հարակից խնդիրները.

Երեկ ինձ այցելության եկավ
Նոյն ինքը
չնայած ջրհեղեղը
նոր էր սկսվում
և ջրի վրա արդեն տմբտմբում էին
գաղափարական, քաղաքական,
հավաքույթները
ցեղասպանությամբ կնքված
թուրքական յաթաղանը
ստալինյան գնդակահարությունից
լայն բացված աչքեր... [7]

Հովհ. Գրիգորյանի «Երկու ջրհեհեղի արանքում» ժողովածուուի նախասկիզբը փարիզյան պատկերներ են, սոցիալական երևույթների մի մասի դիտարկումը հեղինակը կատարում է փարիզյան ֆոնին զուգահեռ: Փարիզը կարծես հայտնվում է ջրհեղեղի մյուս կողմում, այստեղ ժամանակների անցման խնդիր չկա, ժամանակն իր սովորական հունի մեջ է. «Հերթական աշխատանքային օրն է դը Գոլի օդանակավակայանում»,- իսկ ահա այնտեղ հայտնված բանաստեղծն՝ ամբողջովին սոցիալականացված ու քաղաքականացված իր էությամբ, բոլորովին այլ իրականության ներկայացուցիչն է.

Դու, հայոց անկախ պետության ընչազուրկ մի քաղաքացի,
շրջափակումից վերջապես ազատված, խավարի մեջ վարժված աչքերդ ճպճպացնելով,
նետվում ես Փարիզի ***լույսերի մեջ,*** *ինչպես մանկությանդ տարիներին*
Ախուրյանի զով ու մաքուր ***ջուր էիր նետվում****... («Ե.ջ.ա., էջ. 5)*

Լուսային հրավառությունն ու ջուրը նույնականացվում են, դառնում ժամանակի մեջ իր ընթացքով հանգիստ հոսող գետ, ընդ որում՝ անցյալի, մանկության գետ՝ վստահելի ու ապահով: Լույսերով հեղեղված Փարիզը հեռու է ջրհեղեղից, այն առավելապես հակադարձության համար է՝ ժամանակի ու հոգեվիճակների: «Պատերազմից խաղաղություն» , «Տխուր լուրեր Փարիզից», «Սովորական օր Ավինյոյում» և բազմաթիվ այլ բանաստեղծություններում քաղաքակիրթ, մարդկային, բնականոն կյանքի ընթացքով ապրող փարիզյան իրականություն է՝ լույսերով, միջնադարյան դղյակներով, Ձոկոնդայի ժպիտով, մյուս կողմում՝ բանաստեղծը՝ իր սոցիալականացված մտորումներով, որը ոչ մի կերպ չի կարողանում հաղթահարել իրականության փոփոխությունը: Եվ Փարիզն այստեղ ժամանակային, իրավիճակային ընկալման անհաղթահարելի հենց այն եզրն է, ուր պետք է հասնի բանաստեղծը, սակայն անտեսանելի է ընթացիկ ճանապարհը, և կրկին հայտնվում է տեղապտույտ պատկերը՝

հետո լռություն. մարմիս չի
հաշտվում խաղաղության հետ
սեղմում եմ մագնիտոֆոնի կոճակը՝
միացնելով ամոքիչ
ձայնագրությունը...
քիչ հետո կինչի կրակահերթը
փրկարար...
և ես, պարուրվելով
պայթյունների ու թնդյունների
հարազատ աղմուկով.
քիչ-քիչ կսուզվեմ քնի մեջ... (էջ 7):

Արտեմ Հարությունյանի «Նամակ Նոյին» գրքում Փարիզին փոխարինելու է գալիս Նյու-Յորքը.

Ես քնած էի Համիլթոնում,
Ափ-սթեյն Նյու–Յորքի համալսարանական փոքրիկ քաղաքում
ուր ամեն ոք լցված էր իր բարեկեցությամբ ...

Կրկին մեծ ու բարեկեցիկ քաղաք, կրկին հակադարձում, սակայն պետք է հաշվի առնել մի փաստ, Հ. Գրիգորյանի Փարիզը Մոնա Լիզայի հայացքի պես խորհրդավոր, բազմաշերտ ու փախչող իրականություն է, իսկ Ա. Հարությունյանի Նյու- Յորքը՝ փաստացի, ռեալ գոյություն՝ իր երկաթե թելադրող աշխարհայացքով ու քաղաքականությամբ:

Ջրհեղեղային թեման ժամանակային հետընթաց զարգացում ունի. սկսելով դարավերջյան մի կետում՝ այն հետընթաց վերլուծության է ենթարկում ամբողջ հայրյուրամյակը, և դարաշրջանի ամբողջացման ու ինքնամաքրմանն ուղղված անհրաժեշտություն է: Ե՛վ Հովհ. Գրիգորյանի, և՝ Արտեմ Հարությունյանի մոտ ջրհեղեղը նաև դարաշրջանի մեղավոր եղելությունների գիտակցման ու ամբողջացման իրողությունն է: Հ. Գրիգորյանի ժամանակային վայրիվերո առկայծումները հրաշալիորեն տարրալուծված են նրա ամբողջ պոեզիային բնորոշ

»»»» էջ 9

Ջրհեղեղ՝ ժամանակային անանցանելիություն

«««« էջ 8

ժամանակի սյուրռեալ ընկալման մեջ: «Ես զոհվել եմ վերջին անգամ երկրաշարժի ժամանակ, դրանից էլ մի քանի տարի առաջ ցեխակոլոլ խրամատում, 37-ին, ավելի վաղ՝ եղեռնի ժամանակ»՝ սրանք ժամանակային այն կոնկրետ կետերն են, որոնց գոյությունը ամփոփ իրողություն է դարաշրջանի համար և ենթակա ջրհեղեղային ինքնամաքրման: Ժամանակի համանման սյուրռեալ ընկալման մեջ մարդկային դիտանկյունի ինքնավերացարկում կա, դիտարկողն առավել բարձր դիրքում է, ժամանակը՝ իրեն բնորոշ պատմական ու սոցիալական դրսևորումներով, ներընթացային երևույթ:

Արտեմ Հարությունյանի ժամանակը հաստատուն ներկան է, որի առջևից անցնում է ամբողջ պատմական դարաշրջանը. բանաստեղծը անընդհատական ներկա դիտորդի դերում է հանդես գալիս, անգամ՝ պատմական անցյալ ժամանակը դիտարկելիս: Ժամանակային զուգահեռման հետ տեսանելի է նաև տարածական ընդգրկունությունը՝ Նյու-Յորքից մինչև Արցախ, Շուշի ու Դեր Զոր, որոնք միմյանց հետ կապվելով՝ դառնում են մի մեծ մայրցամաք(«Նո՛յ, ե՛կ, մեր լաստը դարձնենք նոր մայրցամաք») ու դուրս գալիս ջրհեղեղային մաքրագործման ու անհայտությունից ինքնափրկման («ամեն ինչ գնում է դեպի անհայտություն»):Հարկավոր է տապանի վրա վերցնել պատմությունն ու պատմական հիշողությունը՝ անհայտությունից փրկելու 1915 թվականի եղեռն ու անմեղ զոհերի հիշատակը, Արցախն ու Շուշին. վախ կա ժամանակային անցումայնության մեջ պատմական ժամանակը կորցնելու: Արտեմ Հարությունյանին տապանը առավելապես պատմական հիշողության կրողն է, ջրհեղեղի՝ պատմական արդարության մաքրագործումը, իսկ լեռան մյուս կողմ հասնելը՝ որպես վերջնակետ՝ նոր արդարության ինքնահաստատման.

Արարատը մոտենում է,
իսկ ջուրը բարձրանում
իրերից այն կողմ ոչինչ չեմ տեսնում,
բայց ես տրամադիր եմ ապրելու,
ես պետք է հասնեմ լեռան մյուս կողմը,
որից այն կողմ՝ էլ ոչ մի լեռ:
Նոյ, ես հրում եմ քո տապանը
դարաբաղյան ամուր
իմ ուսերով դեպի բաց ջրեր,
դեպի Ջրհեղեղը Նոր Սիրո… («Ն.Ն», էջ 42):

Մի հետաքրքիր փաստ ևս, տարբեր են նաև ջրհեղեղի կայացման իրադրային ժամանակային ընկալումները. Հ. Գրիգորյանի «Երկու ջրհեղեղի արանքում» ժողովածուում ժամանակը նախաջրհեղեղային է, Արտեմ Հարությունյանի մոտ՝ արդեն սկսվող երևույթ, իսկ Ղուկաս Սիրունյանի «Տապանի վրա» ժողովածուում՝ արդեն կայացող իրադարձություն:

Ղուկաս Սիրունյանի դեպքում մի փոքր այլ են այն փլվածքները, որոնք իրավիճակը հանգեցնելու են ջրհեղեղի, սակայն նույն է շարժառիթը՝ ժամանակային անանցանելիություն: Անընդհատ պտտվող կարուսելն այլևս հին հեքիաթը չի պատմում կյանքի մասին.

Վերջանում է ձմեռը,
բայց գարունը չի սկսվում,
խախտվել է հերթագայությունը՝
կարուսելը սովորական, պարտադիր,
որի մեջ մեզ դրած՝ պտտում էին.[8]

Սիրունյանի պոեզիայում պատմական ժամանակի անարդարացիությամբ պայմանավորված ջրհեղեղային առաջադրանքին (քանզի բանտված է Արարատ լեռը/ և ուրիշ բարձրունք չկա աշխարհում,/ որ իր գլուխը մարդկությանը տա…) ու սոցիալական կյանքին («Ձմեռ 92»)՝ առավել մեծ ընդգծվածությամբ միանում է մարդկային ներանձնային կյանքի լճացման արձանագրումը: Նախընթաց ամբողջ կյանքն արդեն ի սպառ հանձնվել է ջրհեղեղային տարերքին, փրկված մարդկային հոգին տապանի վրայից դիտարկում է ջրի մեջ լողացող անցյալին, ապրած ու չապրած օրերին և մտորում, թե ու՞ր է հասնելու տապանը այդքան մոտ երևացող 21-րդ դար նոր ժամանակային հանգրվանում:

Մենք մոտենում ենք քեզ՝
ազգովի ելած տապանի վրա,
մինչև որ քաշվեն թունալի ջրերը,
մեր հովիտներից սրբազան…
Իսկ ո՞վ ես դու, 21-րդ դար արքա,
որ այսքան մոտիկ կանգնած ես մեր դեմ
բայց չես երևում…(«Տ. վ.», էջ 8):

Միֆականության տեսանկյունից դիտարկելով ջրհեղեղը՝ Ժենյա Քալանթարյանը շեշտադրում է ջրհեղեղի ապոկալիպտիկ, դարավերջյան ենթակողմը: «Եթե 20-րդ դարի սկզբին աշխարհի անարդարությունը վերացնելու համար հայ գրողներն առաջարկում էին կա՛մ սոցիալական պայքար, կա՛մ ձգտում էին հեթանոսական դարու ասպետական կենցաղին, ապա 21-րդ դարի շեմին նրանք փորձում են աշխարհը պատժել Ահեղ դատաստանով կամ պատժելով՝ մաքրագործել ջրհեղեղով: Սա գաղափարական ու աշխարհհայացքային նոր իրողություն է»: Վառլեն Ալեքսանյանի «Հազարամյակի փակման ծես», Հ. Գրիգորյանի «Հանդիսավոր նիստ նվիրված աշխարհի վերջին», Ղուկաս Սիրունյանի «21-րդ դար» բանաստեղծություններում ակնհայտ ընդգծվածությամբ երևում է դարավերջ - վերջնապատը, որին բախվելով՝ ժամանակը վերջնականապես կորցնում է իր իր տրամաբանված ամբողջականությունն ու դառնում «կես ժամանակ»:

Ինքնին լինելով հրապուրիչ կառույց, ջրհեղեղը բազմաթիվ վերաիմաստավորումներ է ստանում նաև ժամանակային ենթակառուցվածքից դուրս:

Խաչիկ Մանուկյանի բանաստեղծության մեջ Նոյի առասպելականություն ու ջրհեղեղի ինքնամաքրումն էական դեր չեն կատարում, դիտանկյունը մարդկային հումանիզմն է. Նոյին ուղղված մեղադրանքը՝ անմարդկայնություն ու քարսրտությունն է.

-Նո՛յ,ի՞նչ տեսակ մարդ ես եղել,
որ տապան ես ելել անհոգ
երբ մահ է քո շուրջ հեղել…
Ինձ չես փրկել. չե՛ս փրկել,Նոյ…
…Ես մանուկն եմ այն վիրավոր՝
Ջեռքով կառչած քո տապանից…[9]

Բազմաշերտ «տարընթերցումային» տարրերի անչափ հետաքրքիր համակցում է կատարել Ներսես Աթաբեկյանը՝ «Ձրհեղեղի փորձ» բանաստեղծության մեջ. միֆերի խաղարկում *(և արանքում Նոյն է՝ «Արարատ» կոնյակով հարբած, ագռավն էդգար Պոյի կարոտններն է կռռում)*, լինել-չլինելիության փիլիսոփայական մտորումներ և տապան՝ որպես հոգու փրկության միջոց: Ձրհեղեղի ամբողջ այլաբանական պատկերը զուգահեռվում է Քրիստոսի երկրորդ գալստյան, հոգու փրկության և նոր իրականության հաստատման հետ:

Որպես մետաֆորային այլաբանություն՝ ջրհեղեղը դեռ կշարունակի բազմաթիվ վերածևումներ ստանալ մեր գրականության մեջ, սակայն ժամանակային անանցանելիություն ջրհեղեղն ավարտվում է դարավերջյան մտորումներով, ապոկալիպտիկ տագնապներով.այն ժամանակային երևույթ է, ժամանակային էլ ամփոփում է ստանում. հանդիպելով վերջնակետին՝ տեղապտույտ շրջանցումներ է կատարում՝ իրականության ու կյանքի նոր մոդել կերտելու համար:

---

1. Հակոբ Մովսես, Բանաստեղծություններ, Ե., 2005, էջ 76:
2. Հրաչյա Թամրազյան, Ձվարթ գիտություն, 2001, էջ 36:
3. Սերյան Գրիգորյան, Բանասիրություն և բանավեճ, 2002թ, էջ 216:
4. Ժենյա Քալանթարյան, Ուրվագծեր արդի հայ գրականության, 2006, էջ168:
5. Նորայր Գրիգորյան, Տեղատարափ անձրևների ժամանակաշրջան, Ե., 2005:
6. Հովհաննես Գրիգորյան, Երկու ջրհեղեղի արանքում, Ե., 1996, էջ 23:
7. Արտեմ Հարությունյան, Նամակ Նոյին, Ե., 1996, էջ 3:
8. Ղուկաս Սիրունյան, Տապանի վրա, Ե., 1996, էջ 37:
9. Խաչիկ Մանուկյան, Բիբլիական ընդմիջումներ, Ե., 2001թ, էջ 13

ԱՆՈՒՇԻՏ ՀԱՅՐՈՊԵՏՅԱՆ

գիշերը

գիշերն ինքն իր պես սուս ա
ու ստեղնաշարի աղմուկի պես բարձր
գիշերը պատերին կախված նկարների պես աղմկոտ ա
ու հեռավոր քաղաքների լույսերի պես պայծառ
գիշերը երազներիս աղոտ ուրախությունն ա
զարթնում ես
ու
չկա

շուտ մոռացվող ա գիշերը
ճմրթված
միայնակ ա
ընկերական անպատկերացնելի մեծ շրջապատով
բայց միայնակ

գիշերը տափակ ա
լուսնի պես տաք ա ու կլոր
լուսնահոտով լիքը
որ մեկ ա
քթիդ միջով անցնելով
ինչ-որ չափով խառնվում ա քթահոտիդ
ու քեզ դուր ա գալիս

ծնված օրվանից ծանոթ մի բան ա

գիշերը սենյակի մի հատիկ մոծակի տզզոցն ա
որ չի թողնում քնել
քորում ես կծած տեղերը մուշ-մուշ անուշ
ու ատելով ատում ես էդ մի հատիկ մոծակին գիշերը
բայց երբեք զահլա չես անի վեր կենաս ու գլուխը ջարդես
հաջորդ առավոտյան տեսնում ես դրան պատին հանգիստ նստած

գիշերը

գիշերը
լավ տզզալու ժամանակ ա
քնելու ժամանակ ա
մտքերը մաղելու
պարզելու
գիշերը
պարզելու ժամանակ ա
չնայած ինքը մութ ա
բայց էդ մթության մեջ գայթակղիչ մի բան կա

չգիտես ինչի ծնվելուց հետո սկսում են վախեցնել մթնից

լույս չեղած տարիներին
տան մի հատիկ մոմը զուգարան չտանելու համար
քրոջս խնդրում էի մոտս կանգնել
եթե մենակ էի բարձրանում աստիճաններով հանրակացարանի մեր մութ

ինքս իմ հետևից ընկած վազում էի

բոբո ա գիշերը
մեշոկ պապիների ճկուն պարն ա
ու էլի մութ ա մութ ա գիշերը
չնայած երբեմն սպիտակում ա
երբեմն էլ ցերեկից չես տարբերի

իսահակյան-նալբանդյան խաչմերուկի անդորրն ա գիշերը
էս առումով ֆեյսբուքը նմանվում ա մեր խաչմերուկին

գիշերը
շերը
շերը
շը22222

ÒØºðàôÎÀ

ՌԱՉՄԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Արևից ճաքած ճանապարհների փոշին կուլ տալով մեքենան սլանում էր դաշտ: Սովորաբար խոսքի իրավունքը զիջում էինք կանանց, ու լսում սերիալների շուրջ պտտվող նրանց ենթադրությունները:

- Երեկ կովերը սոված էին մնացել, երկու լիտր կաթ եմ հանձնել չորս կովից:

- Հա, մերն էլ նույնը, էլ սրանց չենք խառնելու, լավ չեն պահում:

- Սաղ օրը խմած՝ ընկած են,- մեքենայի պատուհանից նայելով նախիրը դաշտ տանող տղայի կողմը՝ կանայք այս անգամ մոռացել էին սերիալները:

Մեքենան կանգ առավ խաղողի դաշտում, իջանք: Բաժանվեցինք ըստ աշխատանքի, ջրվորները, բահներն ուսերին, քայլեցին առվի ուղղությամբ, կանայք մոտեցան վազերին՝ մաքրելու նրանց փաթաթված մոլախոտերը, մենք էլ՝ մի քանի տղաներով, գետնից բարձրացնելու և կապելու էինք վազերը, որպեսզի բերքը չքսվեր գետնին ու խոնավությունից չփչանար: Արևը քիչ-քիչ բարձրանում և ավելի այրող էր դառնում, մոծակներն ու քրտինքը խանգարում էին, գործը դանդաղում էր: Ժամանակ սպանելու համար ոմանք շուտ-շուտ գնում էին զուգարան, ոմանք՝ ջուր խմելու, ոմանք էլ վառում էին սիգարետն ու ծխում: Ճաշի ժամը մոտենում էր: Չդիմացանք, տասը րոպե շուտ թողեցինք գործն ու մոտենալով մեքենային՝ յուրաքանչյուրն իր տոպրակը վերցրեց, տեղավորվեցինք խոտի վրա: Թեև առանձին էինք նստած, սակայն էլի լսելի էր կանանց շաղակրատանքը, որը սկսվում էր դաշտ մտնելու առաջին վայրկյանից և վերջանում երեկոյան, երբ նրանք իջնում էին տուն դարձող մեքենայից:

Բացեցինք տոպրակները՝ հաց, պանիր, կանաչի, սոխ, ձու, կարտոֆիլ, սա էր մեր ճաշը, ամեն օրվա պես: Մ-ն ձուկ էր բերել, բոլորս մի-մի պատառ կերանք ու ամենից արագ վերջացավ նրա կերակուրը:

- Արա, հողս չգիտեմ ինչ անեմ, հաշվում եմ՝ ցանելն ու քաղելը ավելի թանկ ա նստում, հենա էդ փողը կտամ՝ անասնակեր կառնեմ,- լավաշի մեջ ձուն փաթաթելով՝ դժգոհեց Ս-ն:

- Ընենց են անում, որ բոլորս էլ մեր հողերը ջրի գնով տանք իրանց ու դառնանք իրանց աշխատողը: էս երեք տարի՝ ես էլ հողս չեմ մշակում,-շարունակեց Մ-ն:

- Հեչ չեն կշտանում, տեսնես էդքան փողը դրանք ի՞նչ են անում, ո՞նց են ծախսում, հնար լինի՝ տներս էլ կխլեն ձեռներիցս,- հացի պատառը կուլ տալով ասաց Ս-ն:

- Այ մարդ, հացներդ կերեք, վերջը լավ կլինի, մի հուսահատացրեք է տղին, կվախենա՝ էլ չի պսակվի,- ինձ մատնացույց արեց և ծխախոտը վառեց Շ-ն:

- Ի՞նչ եք որոշել, էս տարի ձմերուկ դնելու ենք, թե՞ չէ, բան չմնաց, արդեն ժամանակն ա, մտածեք:

- Ես կդնեմ:- Մ-ից հետո, բոլորս էլ տվեցինք մեր համաձայնությունը:

Ճաշի ժամը սպառվեց: Խոտի վրայից հավաքեցինք հացը, կանայք դեռ չէին ավարտել սուրճը, ոտքի վրա դատարկեցին կիսատ բաժակները: Նրանք մեզ մոտիկ էին աշխատում: Ալվարդն էլի դժգոհում էր գյուղացու ծանր կյանքից, պատմում, թե քաղաքում ինչպես է ապրում իր եղբայրը, նկարագրում եղբոր կնոջ գրասենյակային հանգիստ աշխատանքը: Ոմանք չէին համաձայնվում նրա հետ, պնդելով, որ հիմա քաղաքացու կյանքն էլ այն չէ, բայց ոգևորված Ալվարդը համառությամբ կարողանում էր բոլորին ապացուցել, որ ինքը ճիշտ է: Խոսքով տարված կանայք հաճախ մոռանում էին աշխատանքը: Արդյունքը եղավ այն, որ Ալվարդին ազատեցին գործից, կանանց զբաղեցնելու համար:

Հաճելի է, երբ երեկոյան գործից գալիս ես տուն, լվացվում, նստում սեղանի մոտ ու գիտակցությանդ մեջ ծնվում է այն միտքը, որ կերածդ հացի յուրաքանչյուր պատառին կա սեփական քրտինքիդ գոնե մեկ կաթիլը: Սեղանն առատ էր՝ տապակած կարտոֆիլ, հավ, գառան խաշլամա, աղցան... Լավ կերա, խմեցի թանն ու բարձրացա վերի հարկ՝ պառկելու:

Ինչպես և որոշել էինք՝ ձմերուկը ցանեցինք, նրանից ստացվելիք եկամուտի հետ յուրաքանչյուրն իր կարիքները հոգալու հույսն էր կապել, ես՝ ուսմանս վարձը վճարելու հույսը: Առավոտվա ինից մինչև երեկոյան վեցը աշխատելու էինք օրավարձով, իսկ վեցից հետո՝ յուրաքանչյուրս մեր սեփական դաշտում: Տոթը գնալով ավելի էր սաստկանում, և տարեցները ձմերուկի համար բարեբեր տարի էին կանխատեսում:

Ամառային արձակուրդներն էին, ոմանց հետ աշխատում էին նաև իրենց դպրոցական երեխաները: Ձրի հետ կլանելով նաև քրտինքի կաթիլներ՝ մեծանում էին ձմերուկի ծիլերը: Մինչև մութն ընկնելը արևը մնում էր մեզ հետ: Կեսօրին կանանցից մեկը չդիմացավ՝ուշաթափվեց, նրան մեքենայով տուն տարան: Հաճախ պատահող նման դեպքերը դարձել էին սովորական՝ չխանգարելով մեր աշխատանքներին:

Օրերն անցնում էին: Դաշտում արդեն երևում էր ձմերուկը, խաղողը սկսել էր քաղցրանալ, դեղձը՝ դեղնել: Թռչունների երամները չէին հեռանում այգուց, թռչելով այս ու այն կողմ՝ նրանք գտնում և ուտում էին շուտահաս քաղցր խաղողը: Կանանց ձեռքերով լցված ու մառաններում շարված լիքը բանկաներն արդեն պատրաստ էին դիմավորելու ձմեռը: Ծիրանահավաքն ավարտվել էր, բերքն առատ էր, բոլորս՝ ոգևորված: Ծիրանից ստացած եկամուտով ոմանք կարողացել էին փակել վարկերը: Ճանապարհի երկու կողմում կանգնել՝ ժպտում էին ցորենի և գարու դեղնած հասկերը:

Առավոտյան գնացինք դաշտ: Ձրելու էինք վերջին անգամ, հետո ձմերուկը կարմրելու էր ու արդեն հավաքելու էինք: Նոր դուրս եկող արևը ժպտում էր: Ծարավից ճաքած հողը խմում ու հագենում էր առվակի ջրով, փոքրիկ բլրակին նստել՝ սպասում էինք ջրի տեղ հասնելուն, որ փոխենք նրա ուղղությունը: Հանկարծ, երկնակամարում սահելով, մի սև ամպ եկավ ու կանգնեց մեր գլխավերևում, փչեց սառը քամին, արևը թաքնվեց:

- Արա, կարկուտ ա, մի հատ գլխիս ընկավ,- ասաց ու գլուխը քորեց Ս-ն:

- Պտի փչացնի, գիտե՞ս,- Մ-ն չհասցրեց խոսքն ավարտել, երբ կարկուտը կատաղի արագությամբ ներքև նետվեց: Վազեցինք դեպի մեքենան: Որպեսզի հետո ձմեռ հիշեցնող սպիտակը ծածկեց ամբողջ դաշտը: Կարկուտն այնպես էր հարվածում, որ թվում էր, թե կկոտրի մեքենայի ապակիները: Լուռ նայում էինք մեռնող այգուն, ոչ ոք խոսք ասել չէր կարողանում, հերթ չտալով միմյանց՝ մեկը մյուսի ետևից վառվում էին սիգարետները: Իր ուժը ցույց տալուց հետո ամպը հեռացավ, ժպտաց ուշացած արևը, կարկուտի խոշոր հատիկները հալվեցին ու ձուլվելով ջրին՝ հոսեցին, տրորելով ցեխակոլոլ ծիլերը: Ձուրն ու ցեխը ծածկեցին ծառերի տակ թափված դեղձի ժպիտը, ժամանակից շուտ բեռնաթափված ծառերն ուղղվեցին, իսկ մերկ վազերն ուզում էին համոզել, որ բերքահավաքն ավարտվել է: Այդպես էլ չկարմրեցին մեր ձմերուկները, մեռավ բոլորիս հույսը:

Վերադարձանք տուն: Փոխեցի ցեխից ու ջրից ծանրացած հագուստս: Կարկուտը տարել էր ուսմանս վարձը: Հաց չկերա, պառկեցի: Ցավալի է, բայց առանց փողի ոչինչ անել չես կարող, գրողի տարած փողը անհրաժեշտ է՝ ուտելու, խմելու, շփվելու, դուր գալու, ընտանիք կազմելու, ապրելու համար:

Սենյակում շրջող փոշին նստեց: Մարմինս հանձնեցի նիրհին:

Քաջ գիտակցելով, որ այլևս անելիք չկա՝ առավոտյան էլի գնացինք դաշտ:

- էն կիսատ արաղը բեր,- ասաց Ս-ն: Գնացի, բերեցի քարի տակ պահած օղու կիսախում շիշը: Նստեցինք, լցրեցի բաժակները.

- Բա, տղերք ջան, էս էլ ձմերուկը, առա՞ք ձեր մեքենաները... Մեր աշխատած փողն էլ կտանք ջրի վարձ ու մատներս բերաններս կնստենք:- Ս-ն խմեց, դրեց բաժակը, շարունակեց.- Գոնե խաղողին բան չլիներ, արաղ կքաշեինք էդ մի բանը տանից կլիներ:

Մինչ մենք վայելում էինք օդին, ու փորձում ծիծաղով հաղթահարել եղածը, մի եզդի հովիվ մոտեցավ ու յուրաքանչյուրիս առաջարկելով տասը հազարական դրամ, խնդրեց՝ թողնենք, որ իր ոչխարը մտցնի մեր դաշտերը: Շ-ն բաժակը դրեց, վեր կացավ.

- Քո մերը, սաղ քո նավսն էր, եղա՞վ ուզածդ, հա՞,- ապտակեց հովվին:

Մոտ վազեցինք, չթողեցինք, որ վեճը շարունակվի, վիրավորված հովիվը հեռացավ՝ քշելով իր հոտը:

- Արա, խեղճ մարդն ի՞նչ էր արել, որ խփեցիր, հո կարկուտը ինքը չի՞ ստեղծել: Հինգ հոգի ենք, ամեն մեկիս տասը հազար կտար, մի ամիս կխմեինք,-ասաց Ս-ն:

Բարկացած ու հիասթափված՝ երդվեցինք, որ այլևս ձմերուկի անուն չենք տալու, վերջ:

Սակայն հաջորդ տարի, երբ գարունը դեռ նոր էր բացել աչքը, մենք թափառում էինք դաշտում՝ որոշելու համար, թե ով որտեղ է ցանելու իր ձմերուկը…

* * *

Հրծվիր, քաղաք,
ես այլևս չկամ...
Ես ոհմակից վաղուց չեմ վախենում, Տեր իմ,
ես միայնակ գայլերից եմ վախենում,
որ հարձակվում են մեկ, մեկ,
ես ուժերիս հատնելուց եմ վախենում...
Հրծվիր, քաղաք,
ծափ տուր, պարիր,
ես այլևս չկամ...
Խոստանում եմ չարտասվել իմ ետևից:
Եթե ուզենայի էլ, չէի կարող,
քանի որ արցունքներս բոլոր,
ձեռքերս, ոտքերս՝ քո ետևից եկող,
տարել ես քեզ հետ, քաղաք:
Էլ ո՞վ կսիրի ինձ այսպիսին, քաղաք,
այսպես բզկտված
(ոհմակ չէ, գայլեր են անցել կողքովս),
էլ ո՞վ կսիրի ինձ այսպես կույր,
անձեռք, անոտք,
էլ ո՞վ կարտասվի ինձ համար...
Չէ, դու հրծվիր, քաղաք,
ես լաց եմ լինելու
թեկուզ առանց արցունք...

* * *

Ու տարիներ անց
ես էլ մեր հարևանի գիրուկ աղջկան կնմանվեմ
ու կամուսնանամ առաջին պատահած
մորուքավորի հետ.
մի օր կտեսնեմ նրան
մեր տան մոտով անցնելիս,
կկախվեմ վզովն ու կասեմ՝ տար
(այլ խնդիր է՝ կտանի, թե չէ.
ամեն մարդու բախտը չի բերում):
Ու կտանի նա ինձ
իր դղյակը չորսպատանի,
ու կժպտամ ես պատերի մերկությանը,

ՌՈՒԶԱՆ ՈՍԿԱՆՅԱՆ

որովհետև ցանկացած մերկություն
գեղեցիկ է ու ցանկալի:
Մաշկս կներծծի խոնավությունը պատերի,
իսկ պատերը՝ մաշկահոտս,
ու կժպտան մարդիկ
ստվերիս մերկության վրա,
իսկ ստվերս կներշնչի իրենից եկող խոնավությունը
պատերի
ու կքարանա...
Հետո աղջիկ կունենամ՝
ինձ պես գիրուկ, զարմացած աչքերով,
ու կծեծի նա բակի տղաներին, աղջիկներին բոլոր,
կծեծի մոր փոխարեն,
իսկ ստվերս կարտասվի հեռվում,
որովհետև մաշկահոտը ժառանգական է,
որովհետև վաղը
առաջին պատահած մորուքավորի հետ
ամուսնացնելու եմ աղջկաս,
որ նա էլ ինձ պես երջանիկ լինի...

Կամ էլ կարելի է մեկ այլ պատմություն հորինել.
տարիներ անց
ես, ի տարբերություն բոլոր աղջիկների,
կփակվեմ նկուղում, մոմեր կվառեմ
(սիրելու աստիճան վախենում եմ մթությունից,
վախենում եմ նրա հետ մենակ մնալուց),
ու ստվերիս հետ կներծծենք
խոնավությունը պատերի...

Սոնա Ավետիսյան

Երևանում կա մի տուն, որտեղ ապրում է 40-ին մոտ մի տղամարդ՝ Ռուբենը: Նա բոլորովին միայնակ է. նրա 2 քույրը՝Սոֆյան և Աննան, ԱՄՆ-ում են (նրանք 10 տարի առաջ էին մեկնել՝իրենց քաղաքում համապատասխան, ավելի ճիշտ ՝իրենց վայել, թեկնածուներ չգտնելով, սակայն օտարության մեջ կյանքը անձնական հարցի,ավելի ճիշտ՝ «հայոց Մեծ խնդրի քարը» չի անտեսել նրանց ճանապարհից.միակ օգուտը՝ համեմատաբար ավելի բարձր աշխատավարձն է: Ծնողները վաղուց են մահացել, նա էլ դեռ ամուսնացած չէ և չի էլ եղել(համենայնդեպս այդպես է ասում): Իմ հերոսը՝ Ռուբենը, շատ անգամ է առաջարկ ստանում Աննայից՝ ապրել նրա հետ ԱՄՆ-ում , բայց մերժում է: Ինչու՞: Հենց սա է իմ պատմության ամենա…ամենա…ը՞ը՞… Նույնիսկ չգիտեմ՝ ինչպես բնութագրել… Սա է իմ պատմության ամենաողբերգական կամ, չէ՛, չէ՛, իմ պատմության ամենազավեշտալի փաստը:

Ռուբենն իրեն համարում է ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱՍԵՐ: Նա ճարտարապետ է, սակայն վաղուց է արդեն, ինչ իր մասնագիտությամբ չի աշխատում.նույնիսկ չգիտեմ՝որտեղից է օրվա ապրուստը հայթայթում: Նա սիրում է ամեն բան առանց բացառության՝իր տունը, բակը, փողոցները, շենքերը, աղբաղույլերը, սիրում է մարդկանց և նույնիսկ հարևաններին,բայց ամենից շատ սիրում է հայկական սրբությունը՝Վարդագույն Տուֆը (կամ, ինչպես ասում են, վարդագույն ընկերը): Մի խոսքով՝ սիրում է իր Երկիրը, միայն թե այդ սիրո անունն է՝ ԱՆՊԱՏԱՍԽԱՆ:

•

Այսօր՝ 2008թ. փետրվարի 8-ին, մենք՝նորածին գրողս և քմահաճ ընթերցողդ, կայցելենք նրան: Քանի որ ես այն եզակի մարդկանցից եմ, ով գոնե երբեմն-երբեմն նրան հիշում և այցելում է, չեմ կարծում, որ նա անակնկալի կգա՝ ինձ տեսնելով, իսկ ինչ վերաբերում է քեզ… Ը՞ը՞…

Ահա և այն բարձրահարկ շենքը, որտեղ նա ապրում է : Վերելակի կոճակը սեղմելու կարիք չկա. բնականաբար՝ ինչպես բոլոր հայկական ավանդական բարձրահարկ շենքերում, վերելակը ինչ-որ մեկի բնակարանի վերանորոգման աշխատանքների պատճառով ենթարկվել է եվրոապականացման: Ստիպված ենք մինչև 9-րդ հարկ ոտքով բարձրանալ:

5-րդ հարկ

Ես-Ա՜հ, սպասիր մի քիչ շունչ քաշենք… Լա՛վ, գնա՛նք: Չորս հարկ մնաց:

Հարևան Ջուլիկ-Հողե՛մ գլուխներդ… Աղբը էլի իմ հարկում են թափել…

Ես-Արա՛գ շարժվիր,եթե չես ուզում, որ ավելը գլխիդ իջնի:

9-րդ հարկ

Ես-Վերջապե՜ս: Լա՛վ, այս հոտավետ, կեղտոտ, նույնիսկ վտանգավոր արշավը կհամարենք առողջ ապրելակերպի սկիզբ:

Հիմա մյուս բարդ քայլն է՝ Ռուբենին ստիպել դուռը բացել: Նրա դռան զանգը, ինչպես միշտ, չի աշխատում…Փորձենք ուժեղ թակել… Չէ՛, հավանաբար քնել է՝ հեռուստացույցը միացրած թողնելով: Լսու՞մ ես, կարծես թե կենդանական աշխարհի մասին հաղորդում է գնում…Ահա՛: Ոտնաձայներ եմ լսում. քիչ մնաց…

•

(դուռը բացվեց)

Ես-Բարև, Ռուբե՛ն: Կարելի՞ է:

Ռուբեն-Իհարկե: Նե՛րս եկեք:

Ես-Հո չխանգարեցի՞նք: Ուրիշ մարդու հո չէի՞ր սպասում:

Ռուբեն-Ո՛չ: Ը՞ը՞… Այսօր՝ ո՛չ:

Ես-Բա ինչու՞ այսքան ուշ բացեցիր: Էլի քնե՞լ էիր:

Ռուբեն:-Չէ,մտածեցի ընտրական քարոզարշավից են եկել:

Ես:-Ծանոթացի՛ր, Ռուբե՛ն, սա “X”-ն է: Քիչ առաջ եմ ծանոթացել նրա հետ: Մտածեցի՝վատ չի լինի, եթե քեզ էլ ծանոթացնեմ: Այսպես է՛լ ավելի կմեծանա քո շրջապատը, չէ՞:

Ռուբեն:-Շատ հաճելի է: Դե՜… Եկեք ներս անցնենք: Թեյ Կուզե՞ք: Թեյ և մեր հայկական ավանդական գաթան, որ դեռ մեր պապերն են կերել…

Ես-Դե՛,նե՛րս արի: Ինչե՞ս շվարած դռների արանքում մնացել:

“X”-Ե՞ս: Ես…Ես բան չեմ հասկանում:

Ես-Երևի իզուր քեզ այստեղ բերեցի: Նստի՛ր:

Ռուբեն:-Ա՜խ, շա՜տ համեղ է: Ի՜նչ էլ ասեն, մեր գաթան ուրիշ է: Ձեզ դուր եկա՞վ:

“X”-Հը՞: Ի՞նձ:

Ես-Ուշադրություն մի՛ դարձրու նրան, Ռուբե՛ն: Իսկապես համեղ է:

Ռուբեն-Ափսո՜ս: Նռան հյութը վերջացել է: Դե դու գիտես, թե ինչ լավն է մեր հայկական նռան հյութը…

Ես:-Գիտե՛մ, գիտե՛մ: Դու ավելի լավ է պատմիր՝ինչ եղավ աշխատանքիդ հարցը: Ջանգեցի՞ն: Դիմել էիր, չէ՞:

Ռուբեն:-Սպասում եմ:

Ես:-Վեց ամի՞ս: Կարծում եմ՝ նոր քայլեր պիտի ձեռնարկես:

Ռուբեն:-Լա՛վ, մի բան կմտածեմ… Մեր դիմացի փողոցի շինարարությունում վարդագույն տուֆից նոր շենք է կառուցվում: Այն հիասքանչ է լինելու: Ես հետևում եմ նրա ծնունդին:

Ես:-Եվ ի՞նչ: Դրանով ի՞նչ ես ստանում:

Øï³Íí³Í å³ï³Ñ³Ï³ÝáõÃÛáõÝ

Ռուբեն:-Ամեն օր՝առավոտյան շուտ, գնում, նստում և երկար նայում եմ նրան… Այն օրը,երբ անձրև էր եկել, տուֆը էլ ավելի վառ, ցայտուն էր դարձել՝ կարծես հայրենիքի հանդեպ տածածս սիրով տոչորվել և սրտիցս կաթող արյամբ էր ողողվել…

Ես-Այդ երբվանի՞ց ես պոետ դարձել:

Ռուբեն-Խմե՛ք թեյը,սառչում է:

Ես-Շնորհակալ ենք, բայց արդեն պետք է գնանք:

Ռուբեն-Դու՛ք գիտեք:

Ես-Այսօր այդքան էլ սթափ չես երևում: Լավ կանես՝հանգստանաս: Հաջողություն: “X”, էլի մնացիր դռների արանքու՞մ:

“X”-Ցը՜…ցտեսություն:

(արդեն բակում)

Ես:-Հը՞, արդեն լա՞վ ես:

“X”:-Ահա՛:

Ես:-Արդեն կես տարուց ավել է, ինչ նա այս կամ այն շինհրապարակում թափառում է:

“X”:-Իսկ դու որտեղի՞ց գիտես նրան:

Ես:-Դե՜, դա երկար պատմություն է…Մեր ընտանիքը նրա քրոջը՝ Սոֆյային, դեռ վաղուց է ճանաչել: Նա իմ անգլերենի ուսուցչուհին էր… Ես, չգիտես ինչու, որոշակի պարտքի զգացում եմ զգում Ռուբենի նկատմամբ: Նա բոլորովին միայնակ է: Հիմա ես փորձում եմ նրան վերստին ներքաշել կյանքի ընթացքի մեջ: Նա այս վիճակում է հայտնվել իր կնոջ անհետանալուց հետո: Ըստ հարևանության բամբասանքների՝ սիրեկանի հետ է փախել: Ճիշտն ասած, ես չեմ մեղադրում կնոջը. Ռուբենին շա՜տ դժվար է հասկանալ:

•

Փետրվարի 11՝ առավոտյան ժամը 9:00 : Ռուբենը, ինչպես միշտ, իրենց բակի խանութի դռների առջև սառցակալած աստիճանների վրա թռչկոտում է ցրտից՝ սպասելով Հասմիկին՝ խանութի աշխատողուհուն, որը պարտադիր 15-ից 18 րոպե ուշանում է: Նա չամուսնացած, 38 տարեկան թմբլիկ կին է, տարիների ընթացքում գրեթե չի փոխվել: Հագուստն էլ գրեթե չի փոխվում, միայն մազակալներն են փոխվում (մեկը մյուսից ավելի մեծ են, փայլուն, գույնզգույն և ճչացող): Ահա, գալիս է: Հեռվից տեսնելով իր համար բավականին համակրելի անձնավորությանը՝ Հասմիկի ժպիտը աստիճանաբար լայնանում է, ձեռքերով անտեղի ուղղում է պոչ կապած մազերը և քայլերն արագացնելով՝ մոտենում է աստիճաններին:

Հասմիկ- Բարի առավոտ, Ռուբի՛կ ջան:

Ռուբեն- Բարի: Ինձ կես մատնաքաշ, մի շիշ մածուն, 2 հատ էն գաթաներից…

Հասմիկ- Գիտեմ, գիտեմ, Ռուբի՛կ ջան: Ամենօրյա նախաճաշդ ես ուզում: Մենակ թե գաթան, հացը երեկվանն են: Որ մի քիչ սպասես, կստանանք թարմը, տաք-տաք: Նստի՝ տեսնեմ ոնց ե՞ս, ինչ ե՞ս:

Ռուբեն- Է՜հ… Չգիտեմ՝ ուր է գնում կյանքս: Միայնակ ապրելը մի բան չի: Մեկը չկա, որ առավոտյան բարև տաս, հարցնես, թե ինչպես քնեց, մեկը չկա, որ նախաճաշելիս նայես աչքերին, այլ ոչ թե սառած աչքերդ պատի մեխին հառած, որից մի ժամանակ աշխատող ժամացույց է կախված եղել՝ մտքերով անցնես ծովից ծով Հայաստանը, հասնես Ամերիկա, այնուհետև վերադառնաս տուն, նայես մեխին ու նորից ինքդ քեզ ասես, որ պետք է ժամացույցը սարքել…

Հասմիկ- Ես չեմ էլ նախաճաշում առավոտյան: Հետո խանութում մի բան ուտում եմ:

Ռուբեն- Վաղը… Չէ՛, հավանաբար, պետք է աշխատես, չէ՞:

Հասմիկ- Ինչո՞ւ: Ես կարող եմ մի 15 րոպեով խանութը փակել…

Ռուբեն- Դե՜…միգուցե միասին նախաճաշենք... Ի՞նչ կասես:

Հասմիկ- Իսկ ինչո՞ւ ոչ այսօր: Հիմա կստանամ պատվերը ու կգնանք, լա՞վ:

Ռուբեն:- Լավ, միայն թե սենյակը թափթփված է…

Հասմիկ:- Է՜հ, ա՛յ մարդ… Վե՛րջ տուր:

•

Ահա, նախաճաշից հետո երկուսն էլ գոհ ժպտալով՝ դուրս են գալիս վերելակից:

Հասմիկ- Լավ էր, շատ լավ: Վա՜յ, նայի՛ր, հաճախորդներ են եկել, սպասում են էս ցրտին:

Ռուբեն- Գնա՛, գնա՛: Ես էլ գնամ՝ տեսնեմ ինչ աշխատանք կարող եմ գտնել: Վաղը՜…

Հասմիկ:- Վաղը կարող եմ մի փոքր ավելի շուտ գալ: Կգնանք զբոսնելու, հը՞:

Ռուբեն:- Եղավ: Հաջողություն:

•

Այսօր նա շատ կթափառի, բայց ոչ՝ ինչպես միշտ: Նրա մեջ մի փոքրիկ մասնիկ է ավելացել, որը կոչվում է իմաստ, և որի պատճառով քայլելիս նրա երեսին ժամանակ առ ժամանակ անիմաստ ժպիտ է ի հայտ գալիս: Նա այլևս փողոց անցնելիս չի մտածում ավտոմեքենայի տակ ընկնելու մասին: Հիմա քայլելիս Ռուբենը նկատում է իր սև կոշիկների վրայի սպիտակ աղի հետքերը, հիմա նա հիշում է, որ պետք է անպայման էլեմենտներ (կներեք օտարամուտ բառի համար) գնի տարիներով կանգնած ժամացույցի համար՝ ժամը արդեն մեծ դեր է ստացել նրա կյանքում: Նա այսօր վերջապես կմոռանա նայել կենդանական աշխարհի մասին պատմող տափակ հաղորդաշարը:

Այժմ նրա կյանքը ԳԻՆ ունի:

•

Այսօր, առավոտյան ժամը ութից, իմ հերոսը երկար մտածում է, թե եղած-չեղած 3 վերնաշապիկներից որը հագնի: Նայում է ժամացույցին, նստում, հետո նորից կանգնում, գնում աջ, ձախ, և քանի որ այնքան էլ մեծ չէ բնակարանը, մի շրջան աթոռի շուրջը կատարելով՝ նորից նստում է…

Եվ ահա վերջապես 08:45-ին նա կանգնած է խանութի առջև: Տարօրինակ եղանակ է.թվում է՝արև է, սակայն սահմռկեցուցիչ է օդը: Շնչելիս թվում է՝ուր որ է կոկորդդ սառցե խողովակ է դառնալու: Բայց դա խոչընդոտ չէ Ռուբենի համար: Արդեն ինն է, նա դեռ չկա: Հավանաբար, Հասմիկը այսօր էլ, ինքն իրեն չդավաճանելով, 15-18 րոպե կուշանա:

09:25: Արդեն լուրջ է: Ռուբենը, սեփական ոտքերի մատները չզգալով, թռչկոտում է՝ աջից ձախ, ձախից աջ: Մոտենում է խանութի տերը՝ Վասակը, թե Վահանը, հայտնելով, որ Հասմիկը իր քրոջ հիվանդ լինելու պատճառով ստիպված է եղել երեխաներին դպրոց տանել, իսկ հետո գնացել է նրանց տուն՝ քրոջը խնամելու…

Ռուբենը, մի փոքր տխրելով, արդեն ուզում է գնալ թափառելու, բայց հանկարծ հիշում է իր վաղեմի ընկերոջը՝ Տերյանի ժողովածուն, որը նա միշտ իր ծոցագրպանում է պահում, իսկ այսօր, որքան էլ տարօրինակ է, տանն է թողել:

Չի զլանա, կբարձրանա տուն, կվերցնի գիրքը, կիջնի և կուղևորվի այն շինհրապարակը, որտեղ հենց նոր զարթնել է կյանքը:

Ահա գալիս է՝ ձեռքով պինդ սեղմած գիրքը, ասես ինչ-որ մեկը պետք է գողանա այդ հին, կեղտոտ, դեղնած, մաշված, ճղճղված գանձը:

Իրեն ոչ բնորոշ արագ քայլերով սլանում է դեպի շինհրապարակ, կարծես առանց իր ներկայության՝ աշխատանքները անհնարին կլինեն:

Հասավ: Մոտենում է նստարան հիշեցնող քարակույտին, նստում և գիրքը դնում կողքին: Գլուխը բարձրացնելով՝ զննում է շենքի մերկ խրտվիլակը, արևի սառը շողերը փայլփլում են նրա թշվառ աչքերում… Նա գլուխը իջեցրեց և կարոտով նայեց գրքին:

Եվ հանկարծ… Վերևից մի վարդագույն տուֆ ընկավ գլխին: Մեկ ակնթարթ, և նա այլևս գոյություն չունի: Այդպես էլ մահացավ՝ կարոտով, որպես իսկական ՀԱՅՐԵՆԱՍԵՐ: Ինչպիսի՜ տիպիկ հայրենասիրական սպանություն…

“X”:- Ի՞նչ: Սպանությո՞ւն: Ուզում ես ասել պատահականություն չէ՞ր: Սպանեցի՞ն նրան: Բայց ո՞վ... Ինչո՞ւ…

Ես:- Սա մտածվա՛ծ պատահականություն է: Ռուբենին սպանեց նա՝ տերյանական FATUM-ը:

“X”:- Դու կարող էիր փրկել նրան:

Ես:- Փրկե՞լ: Ես հենց դա էլ արեցի: Մի՞թե նա հենց դրա՛ կարիքը չէր զգում… Կա նա, թե չկա, միևնույն է՝ արևը նույն կերպ կշարունակի ծագել և մայր մտնել, երկրագունդը կանգ չի առնի՝ շրջվելով, որ տեսնի, արդյո՞ք այդ մարդը դեռ քայլում է երկրագնդիկի քարքարոտ երեսով… Նույնիսկ դու երկար չես հիշի նրան: Դու համոզված ես , որ նա գոյություն չի էլ ունեցել, այնպես չէ՞: Միգուցե և ճիշտ ես, բայց հիշի՛ր՝ յուրաքանչյուր հայ ապրում է ոչ թե սովորական մահկանացուի ճակատագրով, այլ հենց այդ նույն տերյանական FATUM-ով:

ՀԱՍՄԻԿ ՍԻՄՈՆՅԱՆ

որս

ես փակում եմ դուռ ու լուսամուտ
հագնվում եմ, կոճկվում,
փաթաթվում վզախեղդ շարֆով,
կապում եմ աչքերս,
ակնամոմով լցնում ականջներս, քիթս,
որ դու չգաս ոչ մի կերպ,
օդի միջով, բացիլների, շշուկների, ձայնի
չգաս ոչ մի ձև
մոռացվես, ցնդես

ողբեր եմ հորինում քո պատվին
ու հազար օղորմիներով մեռցնում քեզ
ծակծկում եմ դիակդ սիրուս մեջ թաթախված նետերով՝
թունավոր ու սիրատարփ
քարշ եմ տալիս մարմինդ նկուղ՝
խոնավ ու ցուրտ, անլույս ու անհս,
թողնում քեզ առնետներին կեր
լացում եմ փոքրիկ երեխայի պես քո ետևից
անխնամ ու չօգտագործված բառեր ասում քո հասցեին,
հիմնականում սիրային բնույթի
դռան կողպեքը նայում ինձ, չի հասկանում՝ բացվի, թե փակվի
աստիճաններն ասում են՝ հիմա քանդվենք, հս, թե՞ ոնց
քանդվել-մանդվել չկա,
ասում եմ հնարավորինս անտարբեր ու խաղաղ
հող ու փոշի դարձեք
ու նայում եմ երկնքին, որ արցունքներս չկաթկթեն ցած

ու լցված աչքերով չեմ տեսնում, բայց զգում եմ
էս ժամի արևը կտրված գլուխն է իմ
որ ես արնահոսեմ քո մասին այս մայրամուտով
ինչպես և ամեն սովորական օր
պարտաճանաչ պետական աշխատողի պես
օրվա վերջում հոգնած մոռանալով և ինձ և քեզ
և շարունակելով մոռանալ հրապարակից աբովյան ու հյուսիսային
պողոտա
դժվար չի կռահել որ դիտմամբ ու նենգաբար
դու կգաս ընդառաջ՝ նկատելով ինձ դեռ հեռվից
կեսբերան կբարևեմ քեզ չտեսնող հայացքով
որ հանկարծ չիմանաս, որ այդ ես էի, որ մի օր ոռնացի օրագրումս՝
թե՝ չհամբուրել շուրթերը քո, նույնն է թե չունենալ շուրթեր
թե՝ ողբեր եմ հորինել քո պատվին
ու հյուսել երգեր անհամար
ես չէի, սիրելիս
դու էիր,
այդ դու էիր ծակծկել մարմինս սիրուդ թունավոր նետերով
դու էիր սոված ու պսպղուն աչքերի վայրի փայլով
ցնծում հաջող որսիդ համար
կոկորդային հնչյուններ արձակում
և արնաքամ մարմինս
օրորվում էր խաղաղ ու անտարբեր, անտարբեր ու խաղաղ
քո մկանուտ ուսին
լեշահոտով, որ սեր էր լիովին
կտրված գլխով, որ չէր տեսնում, բայց զգում էր՝
արնահոսում էի քո մասին, քո մասին, քո մասին…

ՊԼԱՏԻԿԱ՝ ՍՐՏԻ ՎՐԱ

ՌՈՒԲԵՆ ՓԱՇԻՆՅԱՆ

-Կարծես՝ դժվար էր հասկանալ, որ ամեն ինչ այդքան էլ պարզ չէ, ինչպես կարող է թվալ առաջին հայացքից,- չարությամբ ֆշշացրեց նա՝ կաթոցիկի տակ պառկած:

-Ներեցեք, սիրելիս, բայց ով կարող էր ենթադրել, որ ամեն ինչ այդքան լուրջ է, և որ դուք այդպիսին եք:

-Ինչպիսի՞ն:

Մի՞թե ոչ մեկին չզարմացրեց այն փաստը, որ նորմալ, առողջ մարդու քիթը, ժամանակ առ ժամանակ, ոչ այս, ոչ այն, երկարում է: Երկարում է, իսկ հետո դարձյալ կարճանում:

Մի՞թե անպայման պետք է 12 մատով կամ էլ երկու գլխով ծնվես, որ լրջորեն ուշադրություն գրավես: Թեև ի՞նչ եմ խոսում: Անգամ այդ դեպքում կշարվեն տերմինները՝ ատավիզմ (հետասերում), անոմալիա...

Իսկ մա՞րդը Իսկ ու՞ր մնաց նա - Homo Sapiens - ը: Չէ՞ որ դա, ցավոք, այն ոչ հազվադեպ դեպքերից է, երբ մարդուն ոչ թե պետք է տանջել «գիտական տերմիններով», այլ պարզապես՝ բուժել: Ընդ որում՝ և՛ հիվանդին, և՛ հիվանդությունը: Բայց միայն՝ պարզելով նրա ճշգրիտ հիվանդությունը... Սկզբնապատճառը

Բայց ոչ, ավելի շահավետ է խեղճին ինչ-որ անմեղ արարքի մեջ մերկացնել, նրա վիճակի կամ արտաքինի հետ հիմար (թեկուզ և ենթադրական) համանմանություն անցկացնել, որպեսզի հետո առանց խղճի խայթի հրաժարվեն նրա բուժումից սովորական ձևակերպմամբ. «Բժշկությունն այստեղ անզոր է»:

Դուք հասկանու՞մ եք, որ մյուս մարդկանց համեմատ, ինչ-որ առումով ոչ նորմալ մարդուն նման բան ասելով՝ բժիշկները նրան դատապարտում են «ժողովրդական դատավճռի»: Հենց որ ամբոխը լսի այդ զառանցանքը, ուրեմն՝ այդպես էլ կա:

Ինչ-որ մեկը հիմարություն է դուրս տալիս, իսկ մարդիկ այն հալած յուղի տեղ ընդունելով, հավատում են և թե՛ իրենց, թե՛, ինչը ուշագրավ է, ուրիշների գլուխներն են մտցնում վերջնական տարբերակը՝ խրոնիկական ստախոսություն: Եվ վերջ:

«Ինչու՞ է նրա քիթը աճում: Որովհետև նա ստում է: Ավելի ճիշտ, երբ նա ստում է: Իսկ երբ չի ստում, քիթը նորմալ քիթ է»:

Իսկ հետո՞: Եկեք քնքուշ, հոգեցունց հեքիաթ հորինենք փոքրիկ հրեշի մասին, որի բախտը ախտաբանորեն չի բերել, որովհետև միշտ, երբ նա փորձում էր ստել, խելացի, լավ և առողջ քեռիները բռնում էին նրա ձեռքը: Ավելի ճիշտ, քիթը:

Հիմարներ, դուք գոնե հասկանու՞մ եք, որ այդ ամբողջ պատմությամբ դուք գրեթե կանոնակարգել եք մահացու մեղքերից մեկը: Քանի որ, ուզես չուզես, ընթերցողների (հիմնականում երեխաների) մեծ մասը ԽՂՃԱՀԱՐՈՒԹՅՈՒՆ է զգում:

Հետո ավելի վատ: Պարզվում է՝ ստախոսությունն այստեղ գործ չունի. նա այդպես այլանդակվել է խեղճ հյուսնի պատճառով, որպեսզի հետո պայքարի չարիքի դեմ, մինչև բարի ուժերի կատարյալ և անառարկելի հաղթանակը: Ուրեմն հիմա ինչ՝ մեղավո՞ր, թե՞, ընդհակառակը, մեսիա:

Ինչու՞ են կարդում Ավետարանը: Որպեսզի կեղծեն և ծաղրապատճենե՞ն: Դե, Աստված է նրանց դատավորը:

Ես ամբողջ կյանքում կարծում էի, թե ժամանակը բուժում է: Հավատացեք, ես մյուսներից ավելի հաճախ եմ ստիպված եղել կրկնել այդ «հմայախոսքը», որպեսզի վերջնականապես չհուսահատվեմ: Բայց, ահա, պարզվում է, որ այն միայն բուժող չէ:

Ժամանակը նման է մարդու մաշկին. տարեց տարի ավելի ու ավելի պիրկ է գրկում կմախքը, և մի գեղեցիկ օր մարդու բոլոր արատները, որ մինչ այդ թաքնված էին հաստ ճարպի տակ, արտաքին աշխարհ են դուրս գալիս և դառնում է սարսափելի: Սարսափելի է անդյուրազգացության համար, սարսափելի է անտարբերության համար, սարսափելի է ծիծաղի և նույնիսկ նախանձի համար: Նախանձ, որ ենթագիտակցորեն զգում ես, նայելով մուրացկանին: Նախանձում ես նրա ազատությանն ու անկախությանը:

Իսկ ամենագլխավորը՝ նախանձում ես, որ եթե նրան շատ բան հասանելի էլ չէ, ապա թույլատրելի է ամեն ինչ: Եվ մի վիճեք, դա այդպես է, որովհետև...

- Իսկ ես չեմ էլ վիճում: Դուք միանգամայն ճշմարտացի եք...

Ահա, միայն թե որտեղից անցյալի բժիշկները իմանային, որ ինչ-որ մեկը, ասենք, պարզապես բարձր ճնշում ունի, և նրա բոլոր պրոբլեմները ընդամենը տատանվող, խիստ ռիթմիկ կծկման արդյունք են:

Դե լավ, դա դեռ պարզ է, իսկ մարդի՞կ: Նրանք, ախր, ինչպե՞ս պիտի կռահեին, որ այդ «ինչ-որ մեկը» կարող է այնքան համեստ լինել, որ պարզապես ամաչում է բարձրաձայն խոսել իր հիվանդ և տկար սրտի մասին:

Համաձայնեք, փիլիսոփայելն ու մեղադրելը հեշտ է. իհարկե, փիլիսոփաները գիտեն և հասկանում են մյուսներից ավելի շատ, բայց, միևնույն ժամանակ, ԿԱՐՈՂԱՆՈՒՄ են մյուսներից բավական քիչ:

Դա այդպես չէ՞:

Դե, այդ դեպքում խորհուրդ տվեք երիտասարդ, սկսնակ բժշկին, ինչպե՞ս, կատարելապես չտիրապետելով անհրաժեշտ գիտելիքների, կարողանա օգնել մարդուն՝ փրկվելու ծիծաղից, անտարբերությունից և պարբերաբար կրկնվող ծաղր ու ծանակից:

- Բժիշկ, հեռացեք հայելուց: Դուք իսկապե՞ս կարծում եք, որ Ձեզ կարող է պետք գալ իմ խորհուրդը:

Թույլ տվեք: Զուր ժամանակ մի կորցրեք, այժմ գրեթե կեսգիշեր է: Պատուհանը, շիրմայի ետևում, փակ է:

Իմ մասին մի անհանգստացեք, կասեմ, որ բժշկին իր հիվանդ սիրտը դավաճանեց, և նա չկարողացավ պահել Ձեզ:

Պինոկկիոյին փրկել չհաջողվեց, ամբողջ հույսը Ձեզ վրա է:

Եվ հիշեք, յուրաքանչյուր ինքն իրեն հարգող մարդ կյանքում գոնե մեկ անգամ պետք է ծնունդ տա ինքն իրեն:

Հաջողություն Ձեզ, Գուլիվեր:

Թարգմանությունը՝ Շաքե ԵՐԻՑՅԱՆԻ

¶ÉË ³ íáñ ËÙµ³ ·Çñ ¨ Ñ³Ù³ñÇ å³ï³ëË³Ý³ïáõ` ¶áõñ·»Ý Ê³ÝÇÙ³Ý
ÊÙµ³ ·Çñ` ²ñùÙ»ÝÇÏ ÜÇÏáÕáëÙ³Ý
Ð³Ù³ñÇ Éáõë³ÝÏ³ñÝ»ñÁ` ²Ý³ÑÇï Ð³ßï³å»ïÙ³ÝÇ
Ò¨³íáñáõÙÁ` Ü³é³ ì³ñ¹³ÝÙ³ÝÇ

Èñ³ïí³Ï³Ý ·áñÍáõÝ»áõÃÛáõÝ Çñ³Ï³Ý³óÝáÕ §ê³ïÇñÇÏáÝ¦ êäÀ:
ì Ï³Ù³Ï³Ý 03²063750, ïñí³Í 26.02.04: î å³ù³Ý³Ï 1000,
Í³í³ÉÁ` ïå. 3 Ù³ÙáõÉ: 375019 º ñ¨³Ý 19, Ø³ñß³É´³Õñ³ÙÙ³Ý åáÕ.3,
Ñ»é. 56 21 90, email: **gretert@rambler.ru**:
î å³·ñí³Í¿ ²Ò §î. ¶¨áñ·Ù³Ý¦ ïå³ñ³ÝáõÙ:

ÈáõÙë¿ ï»ëÝáõÙ »ñÏáõ ³ÙÇëÁ Ù»Ï ³Ý·³Ù:
ÜÙáõÃ»ñÝ ÁÝ¹áõÝíáõÙ »Ý Ù»ù»Ý³·Çñ, ã»Ý ·ñ³ËáëíáõÙ ¨ ã»Ý
í»ñ³¹³ñÓíáõÙ:
²ñï³ïåáõÃÙ³Ý ¹»åùáõÙ ÑÕáõÙÁ §¶¶ðºÂºðÂ¦-ÇÝ å³ñï³¹Çñ¿: